ՀԽՍՀ ՀՈՂԺԱՂԿՈՄԱՏ

ՍՏՋ-ԽՏՋ ՏՐԱԿՏՈՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

629.113
Ս-11

ԳՅՈՒՂՇՐԱՏ 1937 ԵՐԵՎԱՆ

ՀԽՍՀ ԺՈՂԿՈՄՍՏ

629.113
Ս-11
4ր.

Հաստատում եմ—ԽՍՀՄ Միության հողագործության
Ժողկոմի տեղակալ՝ ՄՈՒՇԱԼՈՎ Ա. Ի.

23-ը հունիսի 1935 թ.

Հաստատում եմ—ԽՍՀՄ Միության խորհրդատնտեսությունների
Ժողկոմի տեղակալ՝ ՑՈՒՐԿԻՆ Տ. Ա.

22-ը հունիսի 1935 թ.

10074
1010/420886

ՍՏՋ-ԽՏՋ ՏՐԱԿՏՈՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1937 ՅԵՐԵՎԱՆ

ՀՍՍՀ-ՍՍՌ
Ա. Մեհրաբյան
անվան

06.08.2013

ПРАВИЛА ТЕХНИЧЕСКОГО УХОДА ЗА ТРАКТОРОМ СТЗ-ХТЗ

Армсельхозгиз, Ереван, 1937 г.

«Տրակտորների և մեքենաների պահպանությունն անբավարար է: Տրակտորների վերանորոգումը ևս անբավարար է, վարձակալված մի չեվ այժմ դեռ չեն ուզում հաշվանալ, վար մոռացած հիմիր կոզհում են բնթոցիս յեվ միչին նորոգումները յեվ վոչ թե հրմնոպանը: Ինչ վերաբերում է տրակտորների յեվ մեքենաների ոգտագործմանը, այդ գործի անբավարար դրությունն այնքան պարզ է յով հասկացանք, վար ապագայցիերի կարիք չի զգում»:

(Ընկ. ՍՏԱԼԻՆԻ ցված զեկուցումից 17-րդ կուս. համագումարում):

ՍՏԶ-ԽՏԶ ՏՐԱԿՏՈՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Տեխնիկական խնամքի սիստեմը նախատեսում է յուրաքանչյուր տրակտորի ամենորյա և պարբերական ստուգում: Ստուգման ժամանակ փոխում և յուղում են տրակտորի այն մասերը, վորոնց պատճառով կարող է պակասել մեքենայի կարողությունը և աշխատունակությունը:

Տրակտորի վիճակի ստուգման և ստուգման ժամանակ հայտաբերված բոլոր անկանոնություններն ուղղելու հետ միաժամանակ տեխնիկական խնամքի սիստեմը նախատեսում է մեքենայի յուղելու կանոնների լրիվ կիրառումը և բոլոր մեխանիզմների մաքուր պահպանելը:

Տեխնիկական խնամքի հիմնական նպատակն է՝ պահպանել տրակտորի աշխատունակությունը, նրա մասերի և հանգույցների նվազագույն մաշվածքով:

Տրակտորային պարկի անխափան աշխատանքի համար նախա-

պայմանները ստեղծելու նպատակով տրակտորների տեխնիկական խնամքի պարտադիր սիստեմ է սահմանվում, որը կառուցված է հետևյալ կարգով։

1. Ամեն որ, հերթափոխությունից առաջ, այդ նույն հերթի տրակտորիստը բրիգադիրի ղեկավարությամբ մանրազնին պիտի զննի տրակտորը։ Զննության ժամանակ առանձին մեխանիզմներում նկատված թերությունները լրիվ պիտի վերացվեն։ Միաժամանակ տրակտորը յուղվում է տրված յուղման սխեմայով. կցվող գործիքների զննումն ու յուղումը։

Ակոս մտնելուց առաջ բրիգադիրը պարտավոր է ուսումնասիրել տրակտորի շարժիչը։

Առաջին հերթափոխության աշխատանքի սկզբին ամբողջությամբ կատարվում են № 1 տեխնիկական խնամքով նախատեսված 1 ժամ 10 րոպե տևող զննության և խնամքի գործողությունները։

2. Յուրաքանչյուր հերթի աշխատանքի ժամանակ (մոտավորապես 4—5 ժամ աշխատելուց հետո) 10 րոպե տրակտորի պարտադիր կանգառ է սահմանվում տրակտորի և կցվող գործիքների տեխնիկական խնամքի, ռադիատորի ջրի լրացման և շարժիչի կարտերի յուղի մակարդակի ստուգման համար։

Աշխատանքի ժամանակ բրիգադիրը կատարում է տրակտորի պարտադիր ստուգում և պարտավոր է պարբերաբար ստուգել յուրաքանչյուր տրակտորի աշխատանքն ակոսում։

3. Ամեն որ առաջին և յերկրորդ հերթափոխի ընդմիջումի ժամանակ տրակտորն ուշադրությամբ զննվում է՝ ստուգելով տրակտորի բոլոր արտաքին ամրվածքները, մեխանիզմների կարգավորման ճշտությունը և տրակտորը յուղման սխեմայով յուղելով։

Տրակտորի այս զննությունը կատարում են առաջին և յերկրորդ հերթափոխի տրակտորիստները՝ բրիգադիրի ղեկավարությամբ։

Յերկրորդ հերթի աշխատանքը վերջանալուց հետո այդ նույն հերթի տրակտորիստը պարտավոր է տրակտորի բաքը կերոսին լցնել և տրակտորն արտաքինից մաքրել։

Հերթերի ընդմիջումներին, յերկրորդ հերթի աշխատանքի ընթացքում և նրա վերջանալուց հետո, ամբողջությամբ կատարվում են № 2 տեխնիկական խնամքում նշված գործողությունները, որոնց համար նախատեսված է հերթափոխությունների ընդմիջումներին 1 ժամ 10 րոպե, յերկրորդ հերթափոխի աշխատանքի ընթացքում՝ 10 րոպե և յերկրորդ հերթափոխությունը վերջանալուց հետո՝ 20 րոպե։

4. Բրիգադի բոլոր տրակտորների ամենորյա զննումն առաջին հերթափոխի աշխատանքի սկզբին և առաջին ու յերկրորդ հերթափոխերի ընդմիջումներին կատարվում է ակոսում։

Հերթափոխությունների ընդմիջման ժամանակ բրիգադիրը յերկու հերթափոխերի տեխնիկական սպասարկող կազմի մասնակցությունը տրակտորի զննմանը, աշխատանքի հիշտ կազմակերպումը՝ գործողություններն աշխատողների մեջ բաշխելով ըստ № 2 տեխ. խնամքի, պիտի ապահովեն այդ տեխ. խնամքի անցկացումը նախատեսված ժամանակամիջոցում։

5. Ակոս մտնելուց առաջ, բրիգադիրի ղեկավարությամբ անձամբ զննելով տրակտորը՝ յուրաքանչյուր հերթափոխի տրակտորիստը պատասխանատու յե տրակտորի սարքին վիճակի և հերթափոխի ժամանակ անխափան աշխատանքի համար։

6. Պարբերական տեխնիկական խնամքը կատարվում է տրակտորը վորոշ չափի աշխատանք կատարելուց հետո։ Կատարած աշխատանքների ծավալը հաշվում են փափուկ վարի հեկտարներով։

Բոլոր աշխատանքների փափուկ վարի վերածումը կատարվում է Հողժողկոմատի կողմից հաստատված գործակիցներով (կոեֆիցիենտներով)։

7. 17 հեկտար փափուկ վար կատարելուց հետո, հերթափոխերի ընդմիջման ժամանակ տրակտորը զննելիս, փոխում են շարժիչի պատենատուփի և ոդաղտիչի յուղը՝ պարտադիր կերպով լվանալով շարժիչի պատենատուփը և ոդաղտիչի ֆիլտրը։ 17 հեկտար վարելուց հետո անց են կացվում № 3 տեխ. խնամքում նախատեսված խնամքի և զննման գործողությունները, վորոնց համար նախատեսված է մոտ 1 ժամ 35 րոպե։

8. 35 հեկտար (փափուկ վարի վերածած) վարելուց հետո հերթափոխի ընդմիջման ժամանակ անց են կացվում № 4 տեխնիկական խնամքում նշված զննման և խնամքի գործողությունները՝ ձգելով շարժանակային առանցքակալները։ № 4 տեխնիկական խնամքի համար նախատեսված է մոտ 4 ժամ 30 րոպե։

Ծանոթություն.—Շարժանակային առանցքակալները ձգում են 35 հեկտար փափուկ վարից հետո՝ ծնկաձև լիսեռի վզիկների նորմալ վիճակում։

9. № 4 տեխ. խնամքով նախատեսված գործողություններն անցկացնելիս տրակտորը գննում են փակ շենքում կամ տրակտորների դաշտային հանգստավայրում, ըստ վորում շարժանակների առանցքակալները ձգելիս պարտադիր է պատենատուփի լվացումը և շարժիչի պաշտպանումը՝ շարժական վահաններով։

10. Հետագա № 5 տեխնիկական խնամքն անց է կացվում 100 հեկտար փափուկ վարից հետո՝ ձգելով առանցքակալները, փոխելով մաշված վերևի կոմպրեսիոն և, անհրաժեշտության դեպքում՝ նաև յուղի ողակները, ստուգելով մխոցային մատները, շարժանակի գլխիկի վառները և այլն։ № 5 տեխնիկական խնամքն անց է կացվում ՄՏԿայանի վերանորոգման կետում (փակ շենքում) մոտավորապես 8 բանվորական ժամում։

Վերջին տեխնիկական խնամքը, № 6-ը ծնկաձև լիսեռի վզիկների ստուգումով, բոլոր մաշված մխոցային ողերի փոփոխումով և այլն, կատարվում է 200 հեկտար փափուկ վարից հետո, ՄՏԿայանի վերանորոգման կետում։

11. Աշխատանքի ամբողջ ընթացքում սահմանված տեխնիկական խնամքի հատարները կրկնվում են մի քանի անգամ (№ № 1 և 2 տեխնիկական խնամքի գործողություններն անց են կացվում ամեն որ), վորոշ հետևողականությամբ (տես պարբերականությունը)։

12. Տեխնիկական խնամքի կանոններով նախատեսված գննման, ստուգման և վերանորոգման գործողությունները կատարվում են կցված հրահանգչական ցուցումների համաձայն։

13. Տրակտորների տեխնիկական խնամքի հատատված կանոնների ժամանակին կատարելու և վորակի պատասխանատվությունն ամբողջ տնտեսությունում դրվում է ՄՏԿայանի դիրեկտորի և տրակտորային պարկի վարիչի վրա։

14. Տեխնիկական խնամքի կանոններով սահմանված գործողությունները կատարելու համար նախատեսված բոպեներն ու ժամերը հնացել են։ Մեր պայմաններում ստախանովական և հարվածային տրակտորիստներն ապացուցել են, վոր հնարավոր է այդ գործողությունները կատարել 25 և ավելի տոկոս ժամանակի խնայողությամբ։

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 1

ԱՄԵՆ ՈՐ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱՓՈՒՄԸ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ բոպեներով	
	Տրակտոր. բրիգադիրը	Տրակտորիստը
ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՍԿՍԵԼՈՒՑ ԱՌԱՋ		
1. Գննել և ընդունել տրակտորը, գործիքներն ստուգել, տրակտորի բաքերի մեջ ջրի և վառելանյութի առկայությունն ըստուգել։ Արտաքին ամրվածքների ստուգելը՝ շարժիչը շրջանակին, մագնետոյի, վառելանյութի և ջրի բաքերի, ղեկի այուռակի, գործարկման բռնակի, ղեկավարման ղեկի ձգանի, ռադիատորի, հովհարի, ողազտիչի, առջևի սռնու պահանգման ձգանի, կրնկատակի, կխասռնիների պատյանի (կոժուխ), նստատեղի, խթանների (շպորների), յուղաբների և այլն։ Ստուգել հովհարի փոկի ձգվածությունը	5	20
2. Տրակտորը յուղել (ըստ սխեմայի)՝ շարժիչի կարտերից յուղը թափելով մինչև միջին ծորակը և թարմ յուղը լցնելով մինչև վերևի ծորակը։ Ողազտիչի յուղի փոխելը։ Ստուգել կարտերի փոխանցման տուփի, դիֆերի և ռադիատորի խցուցիկ խցանները և յուղի ստուգման ծորակները։ Գննել և լվանալ վառելանյութի ու ջրի ֆիլտրները և նստվածքակալները։ Արտաքինից գննել սնման խողովակները (տես հրահանգ № 2) . . .	—	25
3. Ստուգել կցվող մեքենաների տեխնիկական դրությունը։ Ցուպել և կարգավորել։	—	20
4. Շարժիչն աշխատանքի դցել, կարգավորել և լսել (տես հրահանգ № 3)։ Տրակտորն արտաքինից գննել	5	5
Ընդամենը՝	10	70

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ բոպեներով	
	Տրակտորային դեղամ	Տրակտորիստ
ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱՓՈԽԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ (ակոսում)		
1. Լրացնել ռադիատորի ջուրը, լրացնել վառելանյութը։ Ստուգել կարտերի յուղի մակարդակը և անհրաժեշտության դեպքում լրացնել։	—	10
2. Աշխատանքի ընթացքում (առանց կանգնեցնելու տրակտորի շարժիչը) ստուգել տրակտորի և կցորդ գործիքների դրությունը (տես հրահանգ № 4)	10	—
Ընդամենը	10	10
գումարը	20	80

ԽՆԱՄՔՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՈՏԱՎՈՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Մինչ աշխատանքի սկիզբը . . . . . 1 ժամ 10 բոպե
Աշխատանքի ժամանակ . . . . . — . 10 բոպե

Ընդամենն առաջին հերթափոխում 1 ժամ 20 բոպե

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 2

ՊԱՏԱՐԱՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՈՐ ԱՌԱՋԻՆ ՅԵՎ ՅԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱՓՈԽԻ ԸՆԴՄԻՋՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՎ ՅԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱՓՈԽԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ բոպեներով		
	Տրակտորային դեղամ	1-ին հերթափոխ	2-րդ հերթափոխ
ՀԵՐԹԱՓՈԽԵՐԻ ԸՆԴՄԻՋՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ			
1. Ակոսից դուրս գալիս լսել տրակտորը	5	—	—
2. Առաջին հերթափոխի վերջին ակոսից դուրս գալիս տրակտորը վառելանյութ և ջուր լցնել . . .	—	5	—
3. Տրակտորն արտաքուստ մաքրել, կեղտից և յուղից մաքրել առանձին մեխանիզմները՝ մաքնետոն, դինամոն, կարբյուրատորը և այլն։ Առաջին հերթափոխի տրակտորիստը բրիգադիրին զեկուցում է տրակտորի դրության և աշխատանքի մասին։ Տրակտորի հանձնումը յերկրորդ հերթափոխի տրակտորիստին	5	15	10
4. Ստուգել տրակտորի արտաքին ամրվածքները՝ շարժիչը՝ շրջանակին, մաքնետոն, ղեկի սյունակը, գործարկելու բռնակը, ղեկավարման ղեկի ձգանը, ռադիատորը, ողազտիչը, հովհարը, առջևի սանդուղքի պահանգման ձգանը, կրնկատակը, կիսասռնինների պայտանը, խթանները, առջևի անիվների ռեզորդները։ Ստուգել հովհարի փոկի ձգվածությունը	—	—	15
5. Լյուկերի միջով ստուգել մխոցային մասերի կառանային հեղույսները, շարժանակների առանցքակալների և շարժականների հեղույսների շպլինտների դրությունը (տես հրահանգ № 1)	5	—	—
6. Ստուգել առջևի անիվների առանցքակալների կարգավորումը (առանց քանդելու) և առջևի սրոնու մասի դրությունը	—	—	5

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ րոպեներով		
	Տրակտորիստ-ավելորդ մեկ դեր	Բաղադրամասերի մասնագիտ. դասակարգ. I-ին դեր	Ամենամյա մասնագիտ. դասակարգ. II-ին դեր
7. Տրակտորի յուղումը (ըստ սխեմայի) շարժիչի կաբտերից յուղը թափելով մինչ միջին ծորակը և թարմ յուղ լցնելով մինչև վերին ծորակը։ Ոդաբաշխի յուղը փոխելը տես յուղման հրահանգ). ստուգել կարտերի, փոխանցման տուփի դիֆերենցիալի, ռադիատորի իջուցիկ խցանները և յուղման ստուգիչ ծորակները։	—	10	15
8. Ստուգել կարբյուրատորի և ոդաբաշխի միացման կնիքությունը։ Զննել և լվանալ վառելանյութի և ջրի ֆիլտրները ու նստվածքակալները։ Ստուգել անման սխեմի խողովակների միացումները (նիպելները)։ Ստուգել վառելանյութի քանակը (տես հրահանգչական ցուցում № 2)	—	—	10
9. Ցցվող գործիքների գրության ստուգումը, յուղումը և կարգավորումը	—	10	10
10. Շարժիչի գործարկումը, կարգավորումը, ունկընդրումը և տրակտորի արտաքին զննումը (տես հրահանգ ցուցում № 3)	5	—	5
Ընդամենը	20	40	70
ՅԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱՓՈԽԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ			
1. Ռադիատորի մեջ ջուր լցնել, լրացնել վառելանյութը։ Ցուղի մակարդակի ստուգումը կարտերում և անհրաժեշտության դեպքում թարմ յուղ լցնելը։	—	—	10
2. Աշխատանքի ժամանակ (առանց տրակտորի շարժիչը կանգնեցնելու) տրակտորի և կցվող գործիքների գրության ստուգումը (տես հրահանգչական ցուցում № 4)	10	—	—
Ընդամենը	10	—	10

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ րոպեներով		
	Տրակտորիստ-ավելորդ մեկ դեր	Բաղադրամասերի մասնագիտ. դասակարգ. I-ին դեր	Ամենամյա մասնագիտ. դասակարգ. II-ին դեր
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐՋԱՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ			
1. Տրակտորը վառելանյութ լցնել (ակոսից դուրս գալուց հետո)	—	—	5
2. Տրակտորն արտաքուստ մաքրել։ Առանձին մեխանիզմները՝ մագնետոն, դինամոն, կարբյուրատորը և այլն մաքրել կեղտից և յուղից։ Տրակտորիստը ընդգծիրին զեկուցում է տրակտորի աշխատանքի և գրության մասին՝ իր հերթափոխության ժամանակ	5	—	15
Ընդամենը	5	—	20
Գումարը	35	40	100

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՏԱՎՈՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Հերթափոխության ընդմիջումներում	1 ժամ	10 րոպե
Աշխատանքի ընթացքում	—	10 րոպե
Աշխատանքը վերջանալուց հետո	—	20 րոպե
Ընդամենը հերթափոխում	1 ժամ	40 րոպե

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 3

ԿԱՏԱՐՎՈՒՄ Է 17 ՀԵԿՏԱՐ (ՎԵՐԱԾԱՄ ՓԼՈՒԿ ՎԱՐԻ) ՎԱՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ (ԱՌԱՋԻՆ ՅԵՎ ՅԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԸՆԴՄԻՋՄԱՆ ՑԵՎ ՅԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱՓՈԽԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ բոպեներով		
	Տրակտորային դիզելային	Հեկտարային	Ամբողջ տարվա համար
ՀԵՐԹԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՄԻՋՈՒՄՆԵՐԻՆ			
1. Ակոսից դուրս գալու ժամանակ լեսել տրակտորը	5	—	—
2. Առաջին հերթափոխությունը վերջանալուց հետո (ակոսից դուրս գալիս) տրակտորը վառելանյութ և ջուր լցնել	—	5	—
3. Տրակտորն արտաքուստ մաքրել կեղտից և յուղից, մաքրել առանձին մեխանիզմները՝ մագնետոն, զինամոն, կարբյուրատորը և այլն։ Առաջին հերթափոխի տրակտորիստը բրիգադիրին զեկուցում է տրակտորի աշխատանքի և դրության մասին։ Տրակտորի հանձնումը յերկրորդ հերթափոխության տրակտորիստին։ Գործիքների ստուգումը։ Յուղը բաց թողնել կարտերից (կատարվում է շարժիչը կանգնեցնելուց հետո անմիջապես) . .	5	15	10
4. ա) Լվանալ յուղ լցնելու անցքի ցանցիկը . . .			
բ) կարտերը նավթով լվանալ (լյուկերից՝ շպրիցով).			
գ) կարտերը թարմ յուղ լցնել			
դ) տրակտորը լրիվ յուղել ըստ հրահանգի . . .			
ե) ոդազտիչի ֆիլտրը լվանալ և ոդազտիչի մեջ թարմ յուղ լցնել	—	30	15
զ) ստուգել բոլոր իջուցիկ խցանները			
5. Ստուգել տրակտորի արտաքին ամրվածքները— շարժիչը՝ շրջանակին, մագնետոն, զեկի սյունակը, գործարկելու բռնակը, զեկավարման զեկի ձգանը, ռադիատորը, ոդազտիչը, հովհարը, առջևի սոնու պահանգման ձգանը, կրնկատակը, կիսաառնչնների պատյանը, խթանները, առջևի անիվների ռեբրդները։ Ստուգել հովհարի փոկի ձգվածություն	—	—	15

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ բոպեներով		
	Տրակտորային դիզելային	Հեկտարային	Ամբողջ տարվա համար
6. Ստուգել կարբյուրատորի և ոդազտիչի միացման կնիքությունը։ Զննել և լվանալ վառելանյութի և ջրի ֆիլտրները ու նստվածքակալները։ Ստուգել անման սիստեմի խողովակների միացումները (նիպելները)։ Ստուգել վառելանյութի քանակը (տես հրահանգչական ցուցում № 2)	—	5	10
7. Լյուկերի միջով ստուգել մխոցային մատների կառանային հեղուկները, շարժանակների առանցքակալները և շարժանակների հեղյուսների շպլինտների դրությունը (տես հրահանգ № 1) . . .	5	—	5
8. Կարգավորել փականների բացակները։ ստուգել լծակների յուղման հուսալիությունը (պատյուղները).	10	5	—
9. Ստուգել առջևի անիվների առանցքակալների կարգավորման (առանց քանդելու) և առջևի սրանու մասի դրությունը . . . . . — .	—	—	5
10. Մաքրել և լվանալ կայծառները (մոմերը) և անհրաժեշտության դեպքում կարգավորել ելեքտրոդների բացակը՝ ստուգելով կայծը։ Ստուգել վառոցքի և լուսավորության հաղորդալարերի մեկուսացումը (տես հրահանգչական ցուցում № 6)	5	—	10
11. Կցվող գործիքների դրության ստուգումը։ Ցուղել և կարգավորել	—	—	20
12. Շարժիչի գործարկումը, կարգավորումը, ունկնդրումը և տրակտորի արտաքին զննումը (տես հրահանգ. ցուցում № 3)	5	—	5
Ընդամենը	35	60	95
ՅԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱՓՈԽԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ			
1. Ռադիատորի մեջ ջուր լցնել, լրացնել վառելանյութը։ Կարտերում յուղի մակարդակի ստուգում և անհրաժեշտության դեպքում թարմ յուղի ավելացում։	—	—	10
2. Աշխատանքի ժամանակ (առանց տրակտորի շարժիչը կանգնեցնելու) տրակտորի և կցվող գործիքների դրության ստուգում (տես հրահանգչական ցուցում № 4)	10	—	
Ընդամենը	10	—	10

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր աշխատանքը՝ բոպեներով		
	Տրակտորա-վարիչ մեկ հոգի	1-ին հերթ-փոփոխ	2-րդ հերթ-փոփոխ	ամենը
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՎԵՐՋԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ				
1. Տրակտորը վառելանյութ լցնել (ակոսից դուրս գալիս)	—	—		5
2. Տրակտորն արտաքուստ մաքրել. առանձին մեխանիզմները՝ մաղնետոն, գինամոն, կարբյուրատորը և այլն մաքրել կեղտից և յուղից։ Տրակտորիստը բրիգադիրին զեկուցում է տրակտորի աշխատանքի և գրության մասին՝ իր հերթափոխության ժամանակ	5	—		25
Ընդամենը	5	—		30
Գումարը	50	60		120

ԽՆԱՄՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՈՏԱՎՈՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Հերթափոխության ընդմիջումներում	1 ժամ 35 բոպե
Աշխատանքի ժամանակ	— 10 բոպե
Աշխատանքը վերջանալուց հետո	— 20 բոպե
Ընդամենը	2 ժամ 05 բոպե

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 4

ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ՏՐԱԿՏՈՐԸ 35 ՀԵԿՏԱՐ (ՎԵՐԱՄԱՄ ՓԱՓՈՒԿ ՎԱՐԻ) ՎԱՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ բոպեներով		
	Տրակտորա-վարիչ մեկ հոգի	Կոմբայնավարներ	Ցրակոտ ամենը
1. Հանել տրակտորը։ Տրակտորիստի զեկուցումը բրիգադիրին՝ տրակտորի աշխատանքի ու դրության մասին։ Տրակտորը զննել ու գործիքներն ստուգել։ Տրակտորն արտաքինից լրիվ մաքրել. կեղտից և յուղից մաքրել առանձին մեխանիզմները՝ մաղնետոն, գինամոն, կարբյուրատորը և այլն։ Շարժիչի կարտերից յուղը թափել։	5	—	35
2. Հանել ղեկավարման ղեկի ընդլայնական ձգանը կարտերը, յուղի պոմպը և յուղատար խողովակները։ Զննել, ստուգել և ձգել շարժանակային առանցքակալները[1]), ստուգելով պանդանները և բաբիտի վիճակը։ Ստուգել շարժանակային և կառանային հեղուկների վիճակը և զննել հիմնական առանցքակալները (տես հրահանգ. ցուցում № 7) Նավթով լվանալ կարտերը, յուղի պոմպի ֆիլտրը և յուղախողովակները։ Տեղը դնել յուղի պոմպը, յուղատար խողովակները, կարտերը և ձգանը . .	—	220	60
3. Ստուգել տրակտորի արտաքին ամրվածքները՝ շարժիչը՝ ղեկանակին, մաղնետոն, ղեկի սյունակը, գործարկելու բռնակը, ղեկավարման ղեկի ձգանը, ուղղիչները, ողազտիչը, հովհարը, առջևի առնու պանդանման ձգանը, կրնկատակը, առջևի անիվների ռեբորդները։ Ստուգել հովհարի փոկի ձգվածությունը . . . . . —	—	—	15

[1]) Առանցքակալների ձգումը պետի կատարվի փոկ շենքում։ Փոկ շենքի բացակայության դեպքում թույլատրվում է առանցքակալները ձգել դաշտում, միայն անպայման հետևելով, որ քանդված տրակտորը պաշտպանված լինի փոշուց պաշտպանիչ հարմարանքներով՝ վանաններով կամ վրաններով։ Տրակտորի տակը դրված պետի լինի վրաքաշ կամ փռված բրեզենտ։

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ բոպեներով		
	Տրակտորային բրիգադը	Նորակոչիկ բրիգադիր	Տրակտորիստը
4. Լվանալ, կարգավորել և յուղել առջևի անիվների գլխանիկային առանցքակալները (տես հրահանգ. ցուցում № 21)	—	10	20
5. Ստուգել ոդազտիչի կարբյուրատորին միացման կիպ լինելը։ Զննել և լվանալ վառելանյութի ֆիլտրները և նստվածքակալները, սնման սիստեմի յուռածորակները և խողովակները։ Տրակտորը վառելանյութ և ջուր լցնել (տես հրահանգ. ցուցում № № 2 և 9) . . . —	—	—	25
6. Մաքրել, կայծառները (մոմերը) լվանալ, կարգավորել էլեքտրոդների բացակը, ստուգելով կայծը։ Ստուգել վառոցքի և լուսավորության հաղորդալարերի մեկուսացումը (տես հրահանգ. ցուցում № 6)։ Ստուգել և կարգավորել ընդհատիչի կոնտակտները և մաքրել բաշխիչը (տես հրահանգ. ցուցում № 8)	—	10	15
7. Կարգավորել փականների բացակները (տես հրահանգի, ցուցում № 5)։ Ստուգել լծակների յուղման հուսալիությունը (պատույգ)։	—	15	—
8. Պատենատուփը թարմ յուղ լցնել. համաձայն հրահանգի, տրակտորը և առանձին մեխանիզմները լրիվ յուղել։ Լվանալ ոդազտիչի ֆիլտրը և յուղ լցնել։ Ստուգել բոլոր խշշուցիկ խցանները և յուղի ստուգիչ ծորակները։ Ստուգել յուղի մակարդակը տրանսմիսիայում։	—	—	50
9. Շարժիչն աշխատանքի գցել շարժանակային առանցքակալներին նստեցնելու համար, տրակտորը կարգավորել, լսել և արտաքուստ զննել (տես հրահանգ, ցուցում № 3)	10	10	10
10. Շարժիչը կանգնեցնել և ստուգել շարժանակային առանցքակալները	5	5	5
11. Շարժիչն աշխատանքի գցել	—	—	5
12. Ստուգել կցվող գործիքների դրությունը։ Ցուցել և կարգավորել	—	—	25
Ընդամենը՝	20	270	270

№ 4 խնամքի կատարման մոտավոր ժամանակը՝ 4 ժամ 30 բոպե

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 5

ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ՏՐԱԿՏՈՐԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ 100 ՀԵԿՏԱՐ (վերածած փափուկ վարի) ՎԱՐԻՑ ՀԵՏՈ ՄՏ ԿԱՑԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿԵՏՈՒՄ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ բոպեներով			
	Մեխանիկ	Նորակոչիկ բրիգադիր	Տրակտորիստ	Բանվոր
1. Տրակտորը լրիվ մաքրել յուղից ու կեղտից։ Շարժիչի պատենատուփից բաց թողնել յուղը և ռադիատորից՝ ջուրը (բանեցված յուղը հավաքել հատուկ ամանի մեջ)	—	—	10	30
2. Նախապատրաստել գործիքները, մխոցային ոդակները, զմռնիտի փոշին (նաժդակ) և այլն	—	15	—	—
3. Շարժիչը քանդել՝ վերցնել կապոտը, փականների կափարիչը, փականային մեխանիզմը, կարբյուրատորները, ներածման և արտածման խողովակները, գլանների գլխիկը, զեկավարման զեկի ընդլայնական ձգանը և շարժիչի կարտերը. վերցնել ջրի և վառելանյութի բաքերը։ Մաքրել և լվանալ մասերը։	—	30	60	40
4. Մաքրել և լվանալ գլանանների գլխիկը։ Հղկել փականները (ստուգելով)։ Զննել բլոկի գլխիկի միջադիրը (տես հրահանգ. ցուցում № 10)	5	—	120	—
5. Հանել յուղի պոմպը և յուղատար խողովակները։ Հանել շարժանակային հեղույսների շպլինտներն ու պնդոդակները և հանել մխոցները	—	40	20	—
6. Մխոցները մաքրել այրուքից՝ մաքրելով առվակները։ Լվանալ մխոցները, զննել (առանց քանդելու) մխոցային մատների վիճակը (տես հրահանգ. ցուցում № 11)։ Պահանդների յուղի առվակները և սառնարանները մաքրել նստվածքից։ . .	5	30	—	30

ՀՍՍՀ-ՍՍՀ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ բոպե-ներով			
	Մեխանիկ	Նորակոչ բրիգադիր	Տրակտո-րիստ	Բանվոր
7. Փոխել վերևի կոմպրեսիոն և անհրաժեշտության դեպքում նաև յուղի ողակները: Ստուգել մնացած ողակները (տես հրահանգ. ցուցում № 12)	—	45	—	—
8. Զննել հիմնական առանցքակալները: Մխոցները տեղադրել գլանների մեջ: Կարգավորել շարժանակային առանցքակալները: Ձգել և շպլինտել շարժանակային հեղույսները: Լվանալ և տեղադրել յուղատար խողովակները և յուղի պոմպը (տես հրահանգ. ցուցում № 7)	5	120	—	10
9. Տեղադրել փականները: Գլխիկը տեղադրել բլոկի վրա և հեղույսները ձգել . .	—	30	30	—
10. Տեղադրել լծակները, ստուգել պատրյուգները և կարգավորել փականների բացակները (տես հրահանգ. ցուցում № 5) . .	—	15	25	—
11. Լվանալ և տեղադրել կարտերը, տեղադրել պահանգման ձգանը	—	—	40	—
12. Մաքրել կարբյուրատորը՝ ստուգելով լողանները, ասեղային փականները, տրա, մաշափված անցքերը, յեռածորակները և խողովակները (տես հրահանգ. ցուցում № 9)	10	25	—	—
13. Լվանալ, զննել և տեղադրել բաքերը-նստվածքակալները և սնման խողովակները	—	—	30	—
14. Ստուգել հակադրիչ (դրոսելային) կափարիչի, ծխնիների (շառնիների) և ձգանների աշխատանքը.	—	15	—	—
15. Զննել միացման մուֆտան փոխանցման փոկանվի իրանի (կորպուս) կափարիչի միջով և ստուգել միացման մուֆտայի հենման առանցքակալի յուղումը (տես հրահանգ. ցուցում № 14).	5	—	10	
16. Տեղադրել փականների տուփը, արտածման և ներածման խողովակները, կարբյուրատորը, կապոտը	—	10	30	—

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ բոպե-ներով			
	Մեխանիկ	Նորակոչ բրիգադիր	Տրակտո-րիստ	Բանվոր
16. Զննել, լվանալ և կարգավորել առջևի անիվների առանցքակալները և յուղել (տես հրահանգ. ցուցում № 21) . . .	—	20	—	30
18. Ստուգել և մաքրել մագնետոյի անջատիչի կոնտակտները և կարգավորել բացակը մաքրել բաշխիչը (տես հրահանգ. ցուցում № 15): Մաքրել և լվանալ կայծառները, կարգավորել էլեկտրոդների բացակները՝ ստուգելով կայծը: Մաքրել դինամոյի կոլեկտորը: Զննել հաղորդալարերի մեկուսացումը և էլեքտրոլուսավորության ֆարերը (տես հրահանգ. ցուցում № № 6 և 8)	10	15	15	—
19. Ստուգել տրակտորի բոլոր արտաքին ամրվածքները (նույն թվում ստուգել հավաքման ժամանակ դրված մասերի ամրվածքը)	—	20	—	—
20. Տրակտորը լրիվ յուղել (ըստ հրահանգի) ստուգելով և լրացնելով տրանսմիսիայի յուղը: Ոդազտիչի ֆիլտրը լվանալ և յուղ լցնել: Լցնելու անցքի ցանցիկը լվանալ և յուղ լցնել շարժիչի կարտերի մեջ (տես յուղման հրահանգը): Շարժիչը յուղ և ջուր լցնել	—	—	40	40

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ բոպե ներով			
	Մեխանիկ	Նորոգման բրիգադիր	Տրակտորիստ բիգա	Բանվոր
21. Ստուգել կցվող գործիքների վիճակը։ Լրիվ յուղել և կարգավորել	10	30	20	60
22. Գործարկել շարժիչը՝ շարժանակային առանցքակալները նստեցնելու համար, շարժիչը կարգավորել ու լսել. ստուգել տրակտորին կցված գործիքների կոմպլեկտը	10	10	10	—
23. Շարժիչը կանգնեցնել ու ստուգել շարժանակային առանցքակալների վիճակը	5	10	10	
24. Տրակտորը գործարկել	5	10	—	—
Ընդամենը	70	480	480	240

№ 5 խնամքն անցկացնելու որինակելի ժամանակն 8 բանվորական ժամ է (արհեստանոցում)

Մանրություն.—№ 5 տեխնիկական խնամքն անցկացնելու համար տրակտորը ՄՏկայանի նորոգման կետին հանձնում է տրակտորային բրիգադիրը։ Հանձնելիս տրակտորը զննում և լսում է մեխանիկը։

Տրակտորն արհեստանոցից ընդունում է տրակտորային բրիգադիրը՝ տրակտորիստի հետ միասին։

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 6

ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ՄՏ ԿԱՅԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿԵՏՈՒՄ ՏՐԱԿՏՈՐԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ 200 ՀԵԿՏԱՐ (փափուկ վարի վերածած) ՎԱՐԻՑ ՀԵՏՈ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ բոպեներով				
	Մեխանիկ	Նորոգման բրիգադիր	1-ին հերթ. տրակտորիստ բիգա	2-րդ հերթ. տրակտորիստ բիգա	Բանվոր
1. Կաթսաքարի հեռացումը (տես հրահանգչ. ցուցում № 16) սառեցման սիստեմից (կատարվում է տրակտորը մինչ ընթացիկ նորոգման համար կանգնեցնելը)	—	—	—	—	—
2. Տրակտորը մանրազնին մաքրել կեղտից և յուղից։ Շարժիչի կարտերից յուղը թափել (բանեցրած յուղը հավաքել հատուկ ամանի մեջ)	—	—	10	—	10
3. Նախապատրաստել գործիքները, պահեստի մասերը և նյութերը . .	—	15	—	—	
4. Քանդել շարժիչը՝ վերցնել կապոտը, փականների կափարիչը, փականների մեխանիզմը, կարբյուրատորը, արտածման և ներածման խողովակները, ռադիատորը. վերցնել և քանդել գլանների գլխիկը և հովհարը, հանել ընդլայնական ձգանը և շարժիչի կարտերը, հանել վառելանյութի և ջրի բաքերը։ Մաքրել և լվանալ մասերը.	—	30	60	30	60
5. Մաքրել և լվանալ բլոկի գլխիկը և փականները	—	—	15	—	20
6. Փականների յեղրերը (փասկանները) խառատել	—	60	—	—	—
7. Փականների բները ֆրեզել (տես հրահանգչական ցուցում № 17)	—	15	—	—	—
8. Փականները հղկել (ստուգելով). բլոկի գլխիկի միջադիրը զննել (տես. հրահանգչ. ցուցում № 10)	10	—	105	—	—

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ րոպեներով				
	Մեխանիկ	Նորոգման բրիգադիր	1-ին հերթ. արտադրական	2-րդ հերթ. արտադրական	Բանվոր
9. Հանել և լվանալ յուղի պոմպը և յուղատար խողովակը։ Հանել մխոցները	—	40	20	—	—
10. Ստուգել միացման մուֆտայի վիճակը և լծակների ու առանցքակալի հենման ողակի միջև կարգավորել բացակները։ Ստուգել ճկուն թեղանը (շլանգը)	10	—	20	—	—
11. Քանդել, մաքրել և լվանալ մխոցային խմբի մասերը, փոխել (նախապես խառատելով անվակները) կոմպրեսոիոն և յուղման ողակները և անհրաժեշտության դեպքում փոխել մասերը։ Հավաքել մխոցը։ Մաքրել շարժանակների պահանդները յուղի առվակները և սառնարանները նստվածքից։ Լվանալ փնչիչի (սապունի) միջին ընդերացանցը։ Լվանալ յուղի պոմպը և յուղախողովակը (պահեստի մասեր, № 209—12 հատ, № 210—4 հատ, № 211 4 հատ)	10	180	20	—	40
12. Ստուգել ծնկաձև լիսեռի շարժանակային վզիկները՝ նրա ելիպսը պարզելու համար։ Ստուգել հիմնական առանցքակալների վիճակը (տես հրահանգչ. ցուցում № 18)	30	—		—	—
13. Մխոցները տեղադրել գլանների մեջ, կարգավորել շարժանակային առանցքակալները։ Ձգել և շպլինտել շարժանակային հեղույսները։ Տեղադրել յուղատար խողովակը և յուղի պոմպը	10	120	—	40	—
14. Հավաքել հովհարը և փոխել փոկը։ Տեղադրել հովհարը (պահեստի մաս № 461—1 հատ)	—	30	—	—	—

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ րոպեներով				
	Մեխանիկ	Նորոգման բրիգադիր	1-ին հերթ. արտադրական	2-րդ հերթ. արտադրական	Բանվոր
15. Մաքրել կարբյուրատորը և վառելատար խողովակները՝ ստուգելով լողանը, ասեղային փականը, տրամաչափված անցքերը, յեռախողովակը և խողովակները (տես հրահանգչ. ցուցում № 9 և 13) . .	10	25	—	—	—
16. Քանդել, մաքրել և լվանալ կարգավորիչը՝ ստուգել զսպանակների և բեռիկների վիճակը, հավաքել և տեղադրել (տես հրահանգչ. ցուցում № 19)	30	—	60	—	—
17. Տեղադրել ռադիատորը	—	—	15	20	—
18. Տեղադրել փականները։ Տեղադրել գլխիկը բլոկի վրա և ձգել պնդողակները	10	—	25	40	—
19. Տեղադրել լծակները, լվանալ և ստուգել պարույրները, փականների բացակները (տես հրահանգչ. ցուց. № 5)	—	20	25	—	—
20. Տեղադրել փականների կափարիչը, արտածման և ներածման խողովակները և կարբյուրատորը	—	10	—	30	—
21. Լվանալ վառելանյութի և ջրի բաքերը, սնման խողովակները, նստվածքակալները և ստուգել յուղի մանոմետրը	10	—	10	30	—
22. Ստուգել հակադրիչ կափարիչի ծխնիները և ձգանները	—	10		—	—
23. Զննել, լվանալ և կարգավորել առջևի անիվների գլանիկային առանցքակալները և յուղել (տես հրահանգ. ցուցում № 21) . . .	5	—	—	30	20
24. Մաքրել և կարգավորել մագնետոյի ընդհատիչի կոնտակտները և բաշխիչը։ Մաքրել և լվանալ կայծառները, կարգավորել ելեկտրոդների բացակները՝ ստուգելով կայծը։ Ստուգել ելեկտրոլուսավորության մեկուսացումը և ֆարերը (տես հրահանգչ. ցուցմում № 6 և 8) . .	15	15	—	15	—

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մոտավոր ժամանակը՝ րոպեներով				
	Մեխանիկ	Նորոգման բրիգադիր	1-ի հերթ. արակատ-ելիստ	2 րդ հերթ. արակատ-ելիստ	Բանվոր
25. Մաքրել և ստուգել դինամոն։ Ստուգել կոլեկտորի վիճակը և մաքրել։ Ստուգել խոզանակների հպումը կոլեկտորին։ Ստուգել առանցքակալների վիճակը	15	20	—	—	—
26. Զննել փոխանցման տուփը, հետևել կամրջակը՝ ստուգելով կիսասռնիների առանցքակալները և ձգելով դիֆերենցիալի հեղույսները	20	—	60	40	—
27. Ստուգել և կարգավորել ղեկավարման ղեկի վորդնաձև փոխանցումը և կարգավորել ձգանները (տես հրահանգչ. ցուցում. № 20) . . .	10	—	20	—	—
28. Տեղադրել վառելանյութի և ջրի բաքերը, փականների կափարիչը և կապոտը	—	—	20	20	—
29. Լրիվ ստուգել տրակտորի բոլոր ամրվածքները	10	—	30	30	—
30. Տրակտորը լրիվ յուղել (ըստ հրահանգի) տրանսմիսսիայում յուղը փոխելով։ Լվանալ ոդաղտիչի ֆիլտրը և յուղել, լվանալ արտաքին փնչիչի (սապունի)ցանցը։ Լվանալ յուղ լցնելու անցքի ցանցը, յուղ լցնել շարժիչի կարտերը. շարժիչը վառելանյութ. և ջուր լցնել . . .	—	—	25	40	60
31. Տրակտորին կցված գործիքներն ստուգել	5		5	—	—
32. Շարժիչն աշխատեցնել՝ առանցքակալները նստեցնելու համար։ Լսել և կարգավորել	10	—	15	10	—
33. Կանգնեցնել շարժիչը, ստուգել շարժանակային առանցքակալների վիճակը.	5	10	10	—	—
34. Շարժիչն աշխատեցնել. Ստուգել շարժիչի պտույտները, կարգավորել կարգավորիչը (տես հրահանգչ. ցուցում № 22)	15	—	15	—	—
Ընդամենը	240	600	480	480	240

№ 6 տեխ. խնամքի անցկացման համար մոտավոր ժամանակը՝ 10 բանվորական ժամ (արհեստանոցում)։

ՍՏԶ-ԽՏԶ ՏՐԱԿՏՈՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՍԿԶԲԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԵԿՏԱՐՆԵՐՈՎ	Տեխ. խնամքի №	Տեխ. խնամքն անցկացնելու մոտավոր ժամանակը
Ամեն որ՝ մինչև ակոս մտնելը և առաջին հերթափոխության աշխատանքի ժամանակ	1	1 ժ. 20 րոպե
Ամեն որ՝ հերթափոխությունների ընդմիջման, յերկրորդ հերթափոխի աշխատանքի ժամանակ և յերկրորդ հերթափոխի աշխատանքից հետո	2	1 » 40 »
Ցուրաքանչյուր 17 հեկտար փափուկ վարից հետո	3	2 » 05 »
» 34 մինչև 35 » » » »	4	4 » 30 »
» 50 » 51 » » » »	3	2 » 05 »
» 67 « 68 » » » »	4	4 » 30 »
» 84 » 85 » » » »	3	2 » 05 »
» 100 » 102 » » » »	5	8 » —
» 117 » 119 » » » »	3	2 » 05 »
» 134 » 136 » » » »	4	4 » 30 »
» 150 » 153 » » » »	3	2 » 05 »
» 167 » 170 » » » »	4	4 « 30 »
» 184 » 187 » » » »	3	2 » 05 »
» 200 » 204 » » » »	6	10 » 00 »
» 217 » 221 » » » »	3	2 » 05 »
» 234 » 238 » » » »	4	4 » 30 »
» 250 » 255 » » » »	3	2 » 05 »
» 267 » 272 » » » »	4	4 » 30 »
» 284 » 289 » » » »	3	2 » 05 »
» 300 » 306 » » » »	5	8 » —
» 317 « 323 » » » »	3	2 » 05 »
» 334 » 340 » » » »	4	4 » 30 »
» 350 » 357 » » » «	3	2 » 05 »
» 367 » 374 » » » »	4	4 » 30 »
» 384 » 391 » » » »	3	2 » 05 »
» 400 » 408 » » » »	—	միջին նորոգում

ՍՏԶ-ԽՏԶ ՏՐԱԿՏՈՐԻ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Գծագրի № ըստ գլխի	Գծագրի № ըստ ամբողջ գլխի	ԱՆՈՒՆԸ	Քանակը
1	820	Գնդոդակի յերկկողմանի բանալի 10×12 մմ	1
2	800	» » » 11×14 »	1
3	802	« » » 17×19 »	1
4	804	» » » 22×27 »	1
5	805	» » » 27×32 »	1
6	806	Կիսասոնու բանալի	1
7	807	Ճակատաճառ »	1
8	808	Կայծառների (մոմերի) բանալի	1
9	809	Շվեդական բանալի	1
10	810	Պտուտակիչ-դարձուճակ	1
11	811	Ծակիչ	1
12	812	Հատիչ	1
13	813	Տափակ բերան (տափակապռունկ)	1
14	814	Փականների շոշափիչ	1
15	815	Տավոտմղիչ	1
16	817	Ցուղաման	1
17	818	Մուրճ 0,5 կ. գ.	1
18	819	Մագնետոյի բանալի՝ շոշափիչով	1

ՍՏԶ-ԽՏԶ ՏՐԱԿՏՈՐԻ ՑՈՒՂՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

№ ըստ սխեմայի	ՑՈՒՂՄԱՆ ՏԵՂԸ	Գծագրի համարը	Ցուղի տեսակը	Ցուղման եղանակը	Ցուղման մեջ
	Կատարվում է ամեն հերթափոխին				
1	Միացման մուֆտակի հենման առանցքակալը	1	սոլիդոլ	շպրից	
2	Ձախ անիվը շրջող լծակի ծլխնին	1	»	»	
4	Ձախ անիվը շրջող լծակի մատը	1	»	»	
3	Առջևի ձախ անվի սանդիկը	1	»	»	
5	Հովհարի փոկանիվը	1	»	»	
6	Առջևի սոնու մատը	1	»	»	
9	Առջևի աջ անվի սանդիկը . .	1	»	»	
7	Աջ անիվը շրջող լծակի մատը	1	»	»	Ցուղելուց առաջ մաքրել և ամրացնել «Զերկա» յուղաքները։
8	» » » » ծխնին	1	»	»	
10	Ղեկի յերկայնակի ձգանի առջևի ծխնին	1	»	»	
19	Հովհարի կալուռնակը	1	»	»	
11	Կարգավորիչի և մագնետոյի լիսեռը	1	»	»	
12	Ղեկի յերկայնակի ձգանի հետևի ծխնին	1	»	»	Մղիչով այնքան յուղել մինչև բացակներից դուրս գալը
13	Վորդնաձև ատամանվի լիսեռի առանցքակալները	1	»	»	
15	Ղեկի լիսեռի ներքևի հենարանը	1	»	»	
14	Ղեկի լիսեռի վերևի հենարանը	1	»	»	
16	Հետևի (աջ) կիսասոնու կոնաձև առանցքակալը	1	»	»	
29	Բանարկու լիսեռի գնդիկային առանցքակալը	1	»	»	
17	Հետևի կիսասոնու (ձախ) կոնաձև առանցքակալը	1	»	»	
20—21	Փականների լծակները . . .	2	Ավտոլ	յուղաման	

№ ըստ սխեմայի	ՅՈՒՂՄԱՆ ՏԵՂԸ	Կեսերի քանակ	Ցուղի տեսակը մակնիշը	Սարքավորումը ըստ դասակարգի	Ցուղում անցկացնելու ձևը
22	Շարժիչի կարաները	1	Ամառն ավտոլ 17, ձմեռը, գարնանը և աշնանը՝ 10.	ծածկված դույլ՝ քթով և ձագարով	Ամեն հերթափոխին փոխել յուղը՝ թափել մինչև միջին ծորակը և թարմը կարգավորիչի ցանցով լցնել մինչև վերջին ծորակը։
18	Ոդազտիչը	2	Բանեցրած ավտոլ	Դույլ	Լցնել տակառի մեջ մինչև ցուցիչ անվակը։

Լրացուցիչ յուղվում է տրակտորի յուրաքանչյուր 17 հեկտար (վերածած փափուկ վարի) վարից հետո

24	Գործարկման բռնակը	1	սոլիդոլ	շպրեց	
27	Ղեկի մեխանիզմի վորդնակը	1	»	»	
30	Արգելակի լծակի շնիկի մատը	1	ավտոլ	յուղման	
29	Դինամո	2	»	»	5 կաթիլ առջևի յուղարանը և 10-20՝ հետևինը։
26	Մագնետոն	2	Իլիկային կամ սերզատային	»	15—20 կաթիլ առջևի և 5—10 կաթիլ հետևի յուղարանը
22	Շարժիչի կարաները	1	ամառն ավտոլ 17, ձմեռը, գարնանը՝ և աշնանը 10	ծածկված դույլ՝ քթով և ձագարով	Ցուղը լցնել կարգավորիչի ցանցից։

№ ըստ սխեմայի	ՅՈՒՂՄԱՆ ՏԵՂԸ	Կեսերի քանակ	Ցուղի տեսակը մակնիշը	Սարքավորումը ըստ դասակարգի	Ցուղում անցկացնելու ձևը

Լրացուցիչ յուղվում է յուրաքանչյուր 35 հեկտար (փափուկ վարի վերածած) վարից հետո

31	Առջևի սոնու պահանգման ձեռանի գնդիկային դարձյակ	1	Սոլիդոլ	շպրեց	Հանելկրնկատակի կափարիչը, նավթովլվանալ և սոլիդոլ լցնել

Լրացուցիչ յուղվում է տրակտորի յուրաքանչյուր 200 հեկտար (վերածած փափուկ վարի) վարից հետո

28—32	Տրանսմիսսիա	1	Տրակտորային նիգրոլ	ծածկված դույլ՝ քթով	Տրակտորի յուրաքանչյուր 100 հեկտար աշխատանքից հետո ստուգել յուղի մակարդակը և անհրաժեշտության դեպքում լրացնել։ 200 հեկտարից հետո ամբողջ յուղը բաց թողնել։ Նավթով լվանալ փոխանցումը և յուղ լցնել մինչև նոր մալ մակարդակը

ՍՏԶ-ԽՏԶ ՆՈՐ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՅԵՎ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Գործարանից ստացվող յուրաքանչյուր տրակտոր զննում է ՄՏԿայանի կամ խորհտնտեսության տրակտորային պարկի վարիչը՝ ինքն անձամբ։

2. Ուշադրությամբ զննելուց հետո կազմվում է նախնական ընդունման արձանագրություն։ Ստացված տրակտորն ընդունվում է գործարանի յուրաքանչյուր տրակտորին կցված փաստաթղթերով (անցագիր, փաթեթման թերթ), ստուգելով տեղերի քանակը և բոլոր մասերի ու պիտույքների առկայությունը։

3. Ցերկաթուղու հանցանքով առաջացած՝ մասերի պակասորդ և ՁԼասված հայտաբերելիս յերկաթուղու վարչության մասնակցությամբ կազմվում է արձանագրություն։ Գործարանի՝ բեռնելու կամ փաթեթման հետևանքով առաջացած՝ մասերի կամ գործիքների պակասորդ, նմանապես նրանց ՁԼասված հայտաբերելիս, կազմվում է վթարման (ավարիոն) արձանագրություն։ Արձանագրությունն ուղարկվում է գործարանին՝ պահանջելով անմիջապես ուղարկել պակասող կամ ՁԼասված մասերը և պիտույքները (ռեկլամացիայի կարգով)։

4. Արձանագրությունները (ընդունման, յերկաթուղային և վթարման) ստորագրում է ՄՏԿայանի կամ խորհտնտեսության դիրեկտորը, տրակտորային պարկի վարիչը և յերկաթուղու պատասխանատու ներկայացուցիչը։

5. Տրակտորները վագոնից իջեցնելու և նրանց տեղափոխությունը նախապատրաստելու համար տրակտորային պարկի վարիչը կայարան է ուղարկում մեխանիկների ու տրակտորիստների հատուկ բրիգադ։ Բրիգադն աշխատում է տրակտորային պարկի վարիչի անմիջական ղեկավարությամբ։

6. Տրակտորային պարկի վարիչը, յուրաքանչյուր տրակտորի սարքահավաքից հետո, պարտադիր զննում է այն, ստուգում

և նրա դրությունը և վորոշում շարժիչն աշխատեցնելու հնարավորությունը և շարժիչի ու տրակտորի գործարկման հնարավորությունը։

7. Շարժիչի աշխատեցնելուց առաջ շարժիչը լրիվ յուղել, ջուր և վառելանյութ լցնել, և մինչև գործարկման (օրկատկայի) սկիզբն ստուգվում և անհրաժեշտության դեպքում լվացվում է տրանսմիսսիայի յուղը և շպրիցով առատ յուղվում են յուղման բոլոր տեղերը։

8. Գործարկվում են գործարանից ՄՏԿայան կամ խորհտնտեսություններ մուծվող բոլոր նոր տրակտորները՝ առանց բացառության։

Գործարկման նպատակն է՝ տրակտորի մեխանիզմների շրջվող մակերեսներին հնարավորություն տալ մշակվել նվազ բեռնվածության և թեթև աշխատանքի պայմաններում, նմանապես աշխատանքի մեջ ստուգել տրակտորի և նրա առանձին մեխանիզմների մոնտաժը։

Տրակտորը գործարկվում է տրակտորային պարկի վարիչի կարգադրությամբ՝ տրակտորի մանրազնին տեխնիկական զննում կատարելուց և առանձին մասերի մոնտաժն ստուգելուց հետո։

Գործարկման հետևյալ կարգն ու ձևն է սահմանվում.

ՇԱՐԺԻՉԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ

1. Շարժիչի աշխատանքն անաշխատ ընթացքով նորմալ պտույտների կիսի չափով (500—600) 1 ժամ—րոպե

2. Շարժիչի աշխատանքն անաշխատ ընթացքով (առանց բեռնվածության) նորմալ պտույտների $^3/_4$ չափով, աստիճանաբար պտույտների թիվը նորմալի հասցնելով 1 ժամ—րոպե

Ծանոթություն.—Անաշխատ ընթացքի ժամանակ շարժիչն ուշադրությամբ ունկնդրվում է՝ բոլոր աննորմալ աղմուկները և թակոցները հայտաբերելու համար։ Վերջիններիս առկայության դեպքում անհրաժեշտ է պարզել թակոցի պատճառը և միջոցներ ձեռք առնել նրանք անմիջապես վերացնելու համար։

3. Զննել շարժիչը, լյուկերի միջով ստուգել շարժանակային և հիմնական առանցքակալների դրությունը։ Պատենատուփից՝ յուղը դատարկել մինչև միջին ծորակը և թարմ յուղ լցնել . . . . . 1 ժամ 30 րոպե

4. Տրակտորի աշխատանքն անաշխատ ընթացքով (առանց բեռնվածության) առաջին արագությամբ՝ սկսած շարժիչի մինչև պտույտները, աստիճանաբար հասցնելով մինչև նորմալ պտույտները . . . . . 1 ժամ—բոպե

5. Նույնը՝ երկրորդ արագությամբ . . . . 1 » — »

6. Նույնը, յերրորդ արագությամբ . . . . 1 » — »

7. Նույնը հետընթացով . . . . . — 30 բոպե

Մանրություն.—Ցուրաքանչյուր 1/2—1 ժամ աշխատանքից վոչ ուշ տրակտորն ունկնդրվում է (տրակտորի գործարկումը՝ պիտի կատարվի տարբեր կողմերի շրջադարձերով—աջ, ձախ).

8. Տրակտորն աշխատեցնել առաջին արագությամբ, նորմալ պտույտներով, նորմալ բեռնվածության 1/3-ի չափով (360կգ) . . . . . 1 ժամ—բոպե

Մանրություն.—Աշխատանքը կատարվում է փոխադրության վրա՝ թեթև բեռով։ Գործարկման հրահանգով նախատեսված տրակտորի բեռնվածությունն ստացվում է ըստ հնարավորության դինամոմետրով։

9. Նույնը՝ յերկրորդ արագությամբ (տրակտորի բեռնվածությունը մոտավորապես 300 կիլոգր . . . . 1 ժամ 30 բոպե։

10. Կանգնեցնել շարժիչը, պատենատուփից բաց թողնել յուղը, լվանալ այն, յուղման սիստեմը և պոմպի ֆիլտրը։ Ընդհանուր զննում կատարել, տրակտորը և նրա առանձին մեխանիզմները մաքրել, տրակտորի արտաքին ամրվածքներն ստուգել։ Տրակտորը յուղել թարմ յուղով, ոդազտիչի ֆիլտրը լվանալ և յուղ լցնել։ Ըստ հրահանգի տրակտորը յուղել և ստուգել 8—10 ժամ աշխատանքի ընթացքում (տես յուղելու հրահանգը)։ Ստուգել հիմնական և շարժանակային առանցքակալների դրությունը։ Ստուգել առջևի անիվների առանցքակալների կարգավորման վիճակը (առանց քանդելու)։ Զննել կայծառները և ելեկտրոլաները։ Լսել շարժիչը . . . . . 1 ժամ 30 բոպե

Մանրություն.—Ցուղը թափելուց հետո իջուցիկ խցանը հագցվում է և պատենատուփը կերոսին է լցվում՝ մինչև յուղի պոմպը (նասոսը) խորասուզվելը, դրանից հետո հանում են կայծառները և շարժիչը ձեռքով պտտեցնում, ապա բացում ենք իջուցիկ խցանը և կերոսինը բաց թողնում կեղտի և մետաղյա տաշեղների հետ միասին։ Պատենատուփը կերոսինով լվանալուց հետո, նույն կարգով լվանում են յուղով, վորից հետո թարմ յուղ են լցնում։ Պատենատուփի լվացման գործողությունը կատարվում է մեխանիկի ղեկավարությամբ։

11. Տրակտորն աշխատեցնել յերկրորդ արագությամբ՝ պտույտների նորմալ թվով, թույլատրելի բեռնվածության կիսի չափով՝ պահպանելով ամենորյա տեխնիկական խնամքի կանոնները (տրակտորի մոտավոր բեռնվածությունը՝ 450 կիլոգրամ) . . . . . 20 ժամ —բոպե

12. Տրակտորի ընդհանուր ուշադիր զննում և նրա ու նրա մեխանիզմների՝ մագնետոյի, դինամոյի, կարբյուրատորի արտաքուստ մաքրում և այլն։ Ստուգել տրակտորի և նրա առանձին մեխանիզմների արտաքին ամրվածքները։

Տրանսմիսսիայի կարտերից յուղը թափել (անմիջապես կանգնեցնելուց հետո) և նավթով լվանալ (տես ծանոթությունը)։ Թարմ յուղ լցնել, խնամքի սխեմայով նախատեսված 17 հեկտար աշխատանքից հետո յուղել և ստուգել տրակտորը (տես յուղման հրահանգը)։

Ստուգել հիմնական և շարժանակային առանցքակալների վիճակը և ձգել (անհրաժեշտության դեպքում) շարժանակային առանցքակալները։ Ստուգել (առանց քանդելու) առջևի անիվների առանցքակալների վիճակը և կարգավորումը։ Զննել կայծառները, ելեկտրոլաները։ Ստուգել փականների բացակները և անհրաժեշտության դեպքում կարգավորել։ Լսել շարժիչը գործարկումից հետո։

Մանրություն.—Տրանսմիսսիայի կարտերը լվացվում է հետևյալ ձևով.

ա) յուղը թափելուց հետո տրանսմիսսիան լցվում է կերոսինով մինչև առանցքակալների առանցքների խորասուզվելը.

բ) տրակտորի հետևի անիվը ամբարձիկով (դամկրատով) բարձրացնում են, անջատում են միացման մուֆտան և ըստ արագությունների հերթականության ձեռքով պտտում են հետևի անիվը.

գ) մի քանի բոպե այդպիսի պտույտներ կատարելուց հետո կարտերի իջուցիկ խցանը հանում են և բոլորովին թափում կերոսինը՝ յուղի մնացորդների և հնարավոր մետաղյա փոշու հետ։

13. Տրակտորի աշխատանքը յերկրորդ արագությամբ նորմալ պտույտներով՝ թույլատրվող բեռնվածությամբ $^2/_3$ և $^3/_4$ չափով (աշխատանքի ընթացքում պիտի պահպանել տրակտորի ամենորյա տեխնիկական խնամքի կանոնները) 20 ժամ – բոպե

14. Շարժիչի պատենատուփի յուղի փոխելը։ Տրակտորի մանրամասն տեխնիկական զննումը և նրան նորմալ շահագործման հանձնելը։ Կազմել ընդունման և գործարկման արձանագրություն՝ նշելով գործարկման ժամանակ հայտաբերված բոլոր թերությունները . . . . . 2ժամ—բոպե

ընդամենը 54 ժամ

Տրակտորի գործարկման աշխատանքը տևում է 48 ժամ—բոպե

15. Սույն հրահանգի 1—10 կետերով նախատեսված՝ տրակտորի գործարկման բոլոր գործողությունները պարտադիր կերպով կատարվում են ՄՏկայանի կամ խորհտնտեսության կենտրոնական ագարակում կամ յերկաթուղային կայանում՝ տրակտորային պարկի վարիչի անմիջական ղեկավարությամբ։

Նոր տրակտորների գործարկման սույն կանոնների մեջ մտցած 11—14 կետերի բոլոր գործողությունները կատարվում են ՄՏ կայանի բրիգադային հողամասում կամ խորհտնտեսության բաժանմունքում՝ ՄՏկայանի նորոգման բրիգադիրի անմիջական հսկողությամբ։

16. Տրակտորի գործարկման ընթացքում և նրա վերջանալուց հետո հայտաբերված բոլոր թերությունները վերացվում են։

17. Նոր տրակտորների գործարկման սույն կանոններով նախատեսված բոլոր գործողություններն անցկացնելուց հետո տրակտորային պարկի վարիչը մանրամասն զննում է տրակտորը՝ կազմում է ընդունման տեխնիկական արձանագրություն և լրացնում է անցագիրը, վորից հետո տրակտորը հանձնում է նորմալ շահագործման։

18. Տրակտորների գործարկման ժամանակ աչքի ընկնող թերություններ հայտաբերելու դեպքում, վորոնց վերացնելու համար պահանջվում է գործարանային սարքավորում, տրակտորային պարկի վարիչը կազմում է վթարման արձանագրություն և այն ուղարկում է գործարանին (ռեկլամացիայի կարգով)։ Վթարման արձանագրության պատճենն ուղարկվում է Հողժողկոմատ, իսկ մեկ որինակը մնում է ՄՏկայանի գործերում։

ՍՏԶ-ԽՏԶ ՏՐԱԿՏՈՐԻ ՏԵԽ·ԽՆԱՄՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԶԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀՐԱՀԱՆԳԶԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 1

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Շարժանակների առանցքակալների, շարժանակների հեղույսների օպլիտների դրության ստուգումը զննիչ լյուկերից

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Լաթով խնամքով մաքրել զննիչ լյուկերը։
2. Հանել զննիչ լյուկերը։
3. Պտտելով ծնկաձև լիսեռը՝ առաջին մխոցը դնել ճիշտ վերին մեռյալ կետին։
4. Վերցնել լինգը և մաքուր սրբել։
5. Զննիչ լյուկի միջով լինգի ոգնությամբ սեղմել առաջին շարժանակային առանցքակալը վերևից դեպի ներքև։ Դրանից հետո լինգի ծայրն անցկացնել շարժանակի առանցքակալի պնդուղակների միջև և ձախ ձեռքի մատը պահելով պահանգի վերևի յեզրի և ծնկաձև լիսեռի փորոքայանի (գալտելի) վրա՝ լինգի կտրուկ շարժումով (հենելով այն շրջանակի վրա) սեղմել շարժանակի վրա։

Յեթե այդ դեպքում պարզվի, վոր շարժանակային առանցքակալը շոշափելիս հազիվհազ բարձրացել է, ապա առանցքակալները ձգելու համար տրակտորը պիտի կանգնեցնել։ Այդ դրությամբ եվ նույն ձևով պարզել 4-րդ շարժանակային առանցքակալի լյուֆտը։

6. Ծնկաձև լիսեռը պտտել կես պտույտ և նրա առաջին ծունկը դնել ամենացածր դրության մեջ (ներքին Մ. Կ.)։

7. Նույն ձևով ստուգում են 2-րդ և 3-րդ շարժանակային առանցքակալների դրությունը։

8. Ստուգել շարժանակային հեղույսների պնդողակների շպլինտների հուսալիությունը։ Շպլինտը կիպ պիտի նստած լինի հեղույսի անցքերում, նրա գլխիկը պիտի թաղված լինի պնդողակի կտրվածքում, նրա ներքևի ծայրը ծռված լինի հեղույսի վրա, իսկ վերևինը՝ պնդողակի յեղրնակին։

10. Շարժանակային առանցքակալը լիսեռի վզիկի յերկարությամբ պիտի ունենա յերկայնակի խաղ՝ 0,25—0,55 մմ։

Գործիքներ.— Լինդ . . . . . 1 հատ
շոշափիչ . . . . . 1 »
կամ նրան փոխարինող թիթեղիկ։

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 2

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Վառելանյութի յեվ ջրի ֆիլտրների նստվածքակալների լվանալը, սնման խողովակների առաջին ստուգումը

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Ցերկու նստվածքակալների ծորակները փակել և ֆիլտրները (կամ բաժակները) հանել։

2. Նստվածքակալների ֆիլտրները կերոսինով լվանալ և նրանք լավ փչահարել. բաժակները նստվածքից մաքրել և լվանալ։

3. Բաժակները տեղը դնելիս հետևել, որ խցանի ողակաձև միջադիրը ճիշտ տեղն ընկնի։

4. Բացել նստվածքակալների ծորակները և ուշադիր զննել սնման խողովակները։ Այս կամ այն պնդողակի մոտ վառելանյութի կամ ջրի ծոր նկատելիս անհրաժեշտ է անմիջապես վերացնել։

Գործիքներ.— Պնդողակի բանալի 17 × 19 — 1 հատ։

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 3

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Շարժիչն աշխատեցնել, կարգավորել յեվ լցել

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Նախ քան շարժիչն աշխատանքի գցելն անհրաժեշտ է ստուգել վառելանյութի և ջրի առկայությունը բաքերում, ջրինը՝ ռադիատորում և յուղինը՝ պատենատուփում ու տրանսմիսիայում։

2. Արագությունների փոխման լծակը դնել չեզոք դրության մեջ։ Բանարկու փականիվը պիտի անջատված լինի։

3. Ստուգել, արդյոք կարբյուրատորի լողանային կամերայում կերոսին չկա, յեթե կա այդպիսին, դատարկել։

4. Բաց անել բենզինի բաքի ծորակը և ստուգել բենզինի մուտքը լողանային առանձնարանը՝ ոգտվելով իջուցիկ ծորակով։

5. Բաց անել ջրի բաքի ծորակը, ըստ վորում ջրի առանձնարանի կարգավորիչ ասեղը փակված պիտի լինի։

6. Վառելանյութի ավելի լավ ներածման համար կարբյուրատորի ոդի կափարիչը ծածկել և բաց անել կարգավորիչ ասեղը (ժիկլյոր)՝ $1^1/_2$—2 պտույտ և դանդաղ ընթացքի ասեղը՝ $2^1/_2$ պտույտ։

Շարժիչն աշխատանքի գցելիս հակահարվածից խուսափելու համար վառոցքը դնել ուշացումով։

7. Հակադրիչ կափարիչի լծակը դնել միջին դրության վրա։

8. Շարժիչն աշխատանքի գցելուց հետո առաջին իսկ պտույտներին լրիվ բաց անել ոդի կափարիչը, հակադրիչ կափարիչի լծակը դնել վերին դրության վրա և կարգավորել կարբյուրատորը։

9. Կարգավորված շարժիչը բենզինով պիտի աշխատի 3—10 րոպե (նայած ոդի ջերմությանը)՝ ռադիատորի ծածկաշորի (շտորա) կիսով չափ ծածկված դրությամբ։

10. Ցուցման սիստեմի աշխատանքն ստուգել մանոմետրով կամ վերահսկիչով (կոնտրոլեր)։ Տաքացած շարժիչի մանոմետրի ցրտ դրությունից սլաքը պիտի շարժվի սանդղակի (շկալայի) կեսի վրա։

Տրակտորի վրա վերահսկչի առկայության դեպքում նա պիտի ցույց տա սպիտակ գույն։ Եթե յուղը չի մատակարարվում, վերահսկիչը ցույց է տալիս կարմիր գույն։

11. Հենց վոր շարժիչը տաքացավ, կիսպ ծածկել բենզինի բաքի ծորակը և անմիջապես բաց անել նավթի բաքի ծորակը և կարգավորել կարբյուրատորը։

12. Կարբյուրատորը կարգավորելիս վերևի կարգավորիչ խողովակը (ժիկլյորը) դանդաղ պտտել՝ անցնելով հարուստ խառնուրդից աղքատին և հենց վոր շարժիչը կսկսի հանդչել և նվազեցնել պտույտների թիվը, կարգավորիչ խողովակը (շարժիչի նորմալ պտույտներ ստանալու համար) $^1/_8$—$^1/_4$ պտույտ հետ պտտել։

13. Պտույտների քչության դեպքում կարբյուրատորը կարգավորել դանդաղ ընթացքի ասեղով։ Եթե շարժիչը ծխում է, ասեղը պիտի բաց անել, աղքատ խառնուրդի դեպքում ասեղը պիտի փակել մինչև շարժիչի նորմալ աշխատանք ստանալը։

14. Ճիշտ կարգավորված շարժիչը փակ հակադդիչ կափարիչով քիչ պտույտներ պիտի տա և այն ստիճանաբար բաց անելիս ավելացնի պտույտների թիվը մինչև նորմալը։

Շարժիչը պիտի աշխատի առանց ծխի և ընդհատումների։

15. Մագնետոյի կողմից լսել շարժիչը՝ ոգտվելով ստետոսկոպով։ Եթե նկատվի վորևե աղմուկ կամ թիկոց, տրակտորը չի կարելի աշխատեցնել մինչև անկանոնության վերացումը։

16. Տրակտորի ծանր բեռնվածության դեպքում հնարավոր է պտույտների վորոշ նվազում։ Այդ դեպքում անհրաժեշտ է կարբյուրատորի վերևի կարգավորիչ խողովակը (ժիկլյորը) մի քիչ բաց անել՝ մինչև նորմալ պտույտներ և շարժիչի հավասարաչափ աշխատանք ստանալը։

17. Գլանների մեջ ջուր մատակարարել միայն այն դեպքում, յերբ շարժիչը բեռնավորված է իր կարողության $^2/_3$ չափով։

Ջրի կարբյուրատորի կարգավորիչ խողովակը (ժիկլյորը) բաց անել $^1/_2$—1 պտույտ՝ նայած բեռնվածությանը։

Շարժիչի լրիվ բեռնվածությամբ, բայց առանց ջրի սրսկման, աշխատանքն առաջացնում է շարժիչի գերտաքացում, կարողության նվազում, աշխատանքային խառնուրդի նախապայթում և մխոցային խմբի մասերի վաղաժամ մաշվածություն։ Ջրի ավելորդ սրսկումն ավելացնում է վառելանյութի ծախսը, ջրկացնում և յուղը և նվազեցնում շարժիչի կարողությունը։

Տրակտորի բոլոր տեղափոխությունների ժամանակ ջրի սրսկումը դադարեցնել։

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 4

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի ժամանակ տրակտորի յեվ կցված գործիքների ստուգում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Բրիգադիրը տրակտորային ագրեգատի աշխատանքի ժամանակ պարտավոր է։

1. Լսել շարժիչի աշխատանքը բեռնվածության տակ.

2. Մանրաղնին ստուգել տրակտորին կցված մեքենայի միացման ճշտությունը։

3. Ստուգել կցված մեքենայի կարգավորման ճշտությունը։

4. Ստուգել կարբյուրատորի կարգավորման ճշտությունը (տես հրահանգչական ցուցում № 3)։

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 5

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Փականների բացակների (զազոր) կարգավորումը

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Փականների կափարիչը մաքրել կեղտից և փոշուց.

2. Փականների կափարիչի պնդողակները հետ պտտել, գլանների մեջ բենզին լցնելու ձագարները և փականների կափարիչը հանել։

3. Ծնկաձև լիսեռը գործարկման բռնակով պտտել այնքան, վոր առաջի գլանի ներածման փականը փակվի (լծակը կաղատվի) ներածման վերջը։

4. Շարունակել դանդաղ պտտել ծնկաձև լիսեռը մինչ արտադացուցիչի չեկոցը։ Այդ դեպքում առաջին գլանի մխոցը

կգտնվի վերևում (սեղմման տակտի վերջը)։ Եթե արագացուցիչը վատ է աշխատում կամ տրակտորի մագնետոն հանված է, ապա այդ դեպքում հարկավոր է բաց անել առաջին լյուկը (հաշվելով ռադիատորից) և առաջին գլանի ներածման փականը փակվելուց հետո, հետևելով լյուկից առաջին ծնկին և ծնկաձև լիսեռը բռնակով պտտելով՝ նրան վերև դնել։

5. Երբ առաջին գլանի մխոցն այդ ձևով դրված է սեղմման դրության վերջում (վերևի մ.կ.), կարելի է կարգավորել առաջին գլանի յերկու փականները։

6. Փականի ձողիկի և լծակի ծայրի միջև շոշափիչի ոգնությամբ բացակ թողնել արտածման փականի համար 0,3 մմ և ներածման փականի համար՝ 0,25 մմ։

7. Դրանից հետո լծակների կարգավորիչ պտուտակները և պնդողակները լավ ձգել։

8. Երբ առաջին գլանի յերկու փականները կարգավորված են, լիսեռը կիսապտույտ դանդաղ պտտել մինչ արագացուցչի հաջորդ չեկոցը (առաջին և յերրորդ շարժանակների լիսեռի ծունկը կընդունի վերին դրություն)։

9. Դրանից հետո նույն ձևով կարգավորել յերրորդ գլանի յերկու փականները։

10. Յեվս կես պտույտ անել մինչև արագացուցչի չեկոցը և կարգավորել չորրորդ գլանի յերկու փականները (չորրորդ շարժանակի լիսեռի ծունկը պիտի լինի վերևում)։

11. Լիսեռը ևս կես պտույտ պտտել և կարգավորել յերկրորդ գլանի յերկու փականները։

12. Երբ կարգավորումը վերջացած է, նորից պտտել լիսեռը, նույն կարգով ստուգել յուրաքանչյուր փականի կարգավորման վորակը և լծակների կարգավորիչ պտուտակների պնդողակների ձգվածությունը։

13. Ստուգել՝ արդյոք լծակների յուղիչ պատրույգների ծայրերը հագցված են տաշտակների անցքերի մեջ։

14. Տաշտակները մաքուր ավտոլ լցնել և տեղը դնել փականների կափարիչն ու ձագարիկները։

Գործիքներ.— Պտուտակիչ . . . . . 1 հատ
պնդողակի բանալի—14×17—1 հատ
» » 11×14—1 հատ
շոշափիչ 0,25—0,44 մմ . . —1 հատ
յուղման . . . . . —1 հատ

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ № 6

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Կայծառների մաքրում յեվ լվացում, ելեքտրոդների բացակի կարգավորում յեվ կայծի ստուգում։ Լարերի մեկուսացման յեվ լուսավորության ճարերի ստուգում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Մաքրել կայծառների բները։

2. Հանել լարերի ճզմիչները, հանել լարերը և ճզմիչները նորից դնել։

3. Պտտել և հանել բոլոր կայծառները։

4. Ծայրը տափակացրած պղնձե լարի կտորով այրուքը մաքրել, հետևելով վոր ճենապակին չվնասվի։

5. Բենզինի մեջ թաթախված ատամի խոզանակով մաքրել կայծառի իրանի (կորպուսի) և ելեկտրոդների մակերեսի այրուքը [խստիվ արգելվում է կայծառի միջուկը (սերդեչնիկ) մաքրել դանակով, խարտոցով, քերիչով և այլն]։

6. Շոշափիչով ստուգել ելեկտրոդների բացակը և կարիք յեղած դեպքում չափազանց թեթև հարվածներով կամ փոքրիկ պտուտակիչի ոգնությամբ ծռել կողքի բեխիկը, չհենվելով կենտրոնական ելեկտրոդի վրա։ Կարգավորման ժամանակ կայծառի կենտրոնական ելեկտրոդն արգելվում է ծռել։

7. Ելեկտրոդների բացակի մեջ պիտի լինի 0,5—0,75 մմ։ Բացակն ստուգվում է մագնետոյի բանալիի շոշափիչով։

8. Կայծառները միացնել հաղորդալարերի և մասսայի հետ։

9. Դանդաղ պտտելով ծնկաձև լիսեռը և հաշվի առնելով բռնկման կարգը՝ հետևել յերևացող կայծերին։

10. Կայծը պիտի լինի պայծառ, բաց-յերկնագույն և թռչի յուրահատուկ ձայնով։

11. Անջատելով հաղորդալարերը և յուրաքանչյուր կայծառի տակ պղնձե աղբեստային ողակ դնելով՝ իրենց կայծառները դնել տեղը։

12. Զննել հաղորդալարերի մեկուսիչների վիճակը և նրանց ջնասված տեղերը փաթաթել մեկուսիչ ժապավենով։

13. Մանրամասն զննել լուսավորության բոլոր լարերը,

ֆարերի և նրանց ապակիների ամրվածքները, լամպերի դրութիյունը և կոնտակտների շփման կիպ լինելը։

Դարձիքներ.— *Կայծառի բանալի № 808 . . . . 1 հատ*
պղնձե լարի կտոր 2 մմ տրամագծով 1 հատ
ատամի խոզանակ . . . . . 1 հատ
շոշափիչ 0,5—0,75 մմ . . . . . 1 հատ

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 7

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Շարժանակային առանցքակալների ձգումը, միաժամանակ օսուգելով պահանգների նստվածքն ու բաբբիտի դրությունը յեվ յուղային անվակների ու սառնարանների մաքրումը նստվածքից։ Հիմնական առանցքակալների զննում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Պատենատուփը և շրջանակի ներքևի մասը նախապես մանրաղնին մաքրել, հետո հանել պատենատուփը։

2. Հանել բոլոր կայծառները (կայծառի բանալիով)։

3. Պատենատուփն իջեցնելուց հետո հանել յուղի պոմպը (չվնասելով բաշխակի ցանցը) և յուղի խողովակը։

4. Ձեռքով վերցնելով (դնելով մեքենան զննիչ փոսի վրա կամ պառկելով մեջքի վրա) առանցքակալը և այն շարժելով վարից դեպի վեր՝ մոտավորապես պարզել յուրաքանչյուր առանցքակալի մաշվածությունը, նախորոք վորոշելու համար, թե մոտավորապես քանի բարակ միջադիր պիտի հանել։

5. Բոլոր պնդողակների շպլինտները հանել և հատուկ ճակատահատ բանալիով նրանք մի պտույտ հետ պտտել։

6. Ուշադրությամբ զննել յուրաքանչյուր շարժանակային առանցքակալը և համոզվել, վոր պահանգների և կափարիչների վրա նիշեր կան։ Վորպես կանոն, բոլոր նիշերը պիտի լինեն բաշխիչ լիսեռի կողմից։

7. Քանդել առաջին շարժանակային առանցքակալը և ստուգել պահանգների նստվածքը։ Պահանգների յեզրերն իրենց ընների մակերեսից՝ 0,05—0,15 մմ բարձր պիտի լինեն։ Այն դեպքում, յերբ պահանգի վերևի յեզրերը հավասար կլինեն կափարիչին, այդպիսի պահանգն անպետք համարել հետագա աշխատանքի համար։

Ուշադրությամբ զննել յուրաքանչյուր պահանգի բաբբիտի մակերեսը, յուղի առվակները և սառնարանները, յեթե կհայտաբերվեն նստվածքներ, նրանք մաքրել սուր դդալաձև քերիչով։ Յուղի առվակների սուր յեզրերը քերիչով կլորացնել։

8. Յեթե բաբբիտի մակերեսի վրա բաբբիտի ընկած կտորներից (առանց բաբբիտը պոկ գալու) հայտաբերվեն փոքրիկ խոռոչներ կամ գալտելի փշրվածքներ, այդպիսի պահանգի ճաստված տեղերը քերիչի ծայրով թթվուտ քսել և զոդիչով զգուշ մաքրել բաբբիտ կամ յերեքնյակ լցնել, ապա սուր քերիչով հանել ավելորդ բաբբիտը և մակերեսը հավասարեցնել։

9. Յերկու պահանգները մաքուր կերոսինով լվանալ։ Պահանգները, շարժանակի ներքևի կափարիչը և լիսեռի վզիկը մաքուր շորի կտորտանքով չորացնել։ Լիսեռի վզիկը յուղել մաքուր ավտոլով և առանցքակալի յուրաքանչյուր կողմից վերցնելով սահմանված քանակությամբ միջադիր (միատեսակ հաստության)՝ հավաքել այն այնպես, վորպեսզի նիշերը լինեն իրենց նախկին տեղում, ապա ճակատահատ բանալիով (առանց լծակի) հավասարաչափ թեթև ձգել բոլոր չորս պնդողակները։

Հետագայում ձգումը կատարել լծակով՝ խաչաձև և ստիպնաբար։ Բոլոր չորս պնդողակները ձգել մինչև վերջ, ըստ վորում պնդողակների միջի կտրվածքները պիտի կանգնեն հեղույսների անցքերի դիմաց։

10. Ստուգել առանցքակալների կարգավորման ճշտությունը՝ փորձելով այն ձեռքով շարժել վզիկի յերկարությամբ։ Յեթե առանցքակալը շարժվում է, ապա անհրաժեշտ է յուրաքանչյուր կողմից հանել ևս մեկական բարակ միջադիր։

Յեթե առանցքակալը լիսեռի վզիկի յերկարությամբ ձեռքով չի շարժվում, ապա փորձել այդ կատարել մուրճի փայտե կոթի թեթև հարվածներով՝ շարժանակի ներքևի կափարիչի կողքերին։ Յեթե այդ հարվածներից առանցքակալը վզիկի յերկարությամբ շարժվում է, անհրաժեշտ է ստուգել ձգվածությունը, գործարկման բռնակով պտտելով ծնկաձև լիսեռը։

Ճիշտ ձգվածության ժամանակ ձնկաձև լիսեռը պիտի պտտվի քիչ ուժով, նկատի ունենալով, վոր բոլոր առանցքակալների վերջնական ձգվածության ժամանակ շարժիչն աշխատանքի պիտի դցի մի մարդ՝ գործարկման բռնակով։ Յեթե առանցքակալը չի

շարժվում մուրճի կոթի հարվածներից, ապա մեկ ամենաբարակ 0,05 մմ միջադիրը պիտի տեղը դնել և վերջնականապես կարգավորել առանցքակալը, մի պտույտ հետ տալով կարգավորված առանցքակալի պնդողակը. նույն ձևով կարգավորել մնացած յերեք առանցքակալը։

11. Կարգավորելով բոլոր առանցքակալները, անհրաժեշտ է բոլոր պնդողակները խաչաձև ձգել մինչև վերջ, պնդողակների կտրվածքները դնելով հեղույսների անցքերի դիմաց։

12. Փորձել կատարված ձգումը՝ բռնակով պտտելով լիսեռը։ Ճիշտ ձգվածության դեպքում մի մարդ թեպետ և զգալի ուժով պիտի կարողանա լիսեռը պտտել։

13. Արգելվում է շարժանակային հեղույսները շպլինտել գործածված շպլինտներով։

14. Շպլինտները պիտի կիպ մտնեն հեղույսների անցքերը։ Թույլ շպլինտները հաշվել խոտան։ Շպլինտի գլխիկն անպայման պիտի խորասուզված լինի պնդողակի կտրվածքում, շպլինտի ներքևի ծայրը պիտի ծռված լինի հեղույսի վրա, իսկ վերևի ծայրը՝ պնդողակի յեզրի վրա։

15. Ցուղիչ խողովակը և պոմպը տեղը դնելիս հատուկ ուշադրություն դարձնել ցանցիկի և խողովակի մաքրության վրա։ Վերջինը հարկավոր է լավ փչահարել։ Ուշադրություն դարձնել պոմպի և խողովակի իրանի (կորպուսի) միջև յեղած միջադիրի վիճակի վրա։ Զմոռանալ բաշխիչ ատամնանիվների յուղող խողովակը միացնել։

16. Պատենատուփը տեղը դնելիս համոզվել, վոր նա մաքուր է. դնել թղթե միջադիրի վիճակը։

17. Շարժիչն աշխատանքի գցելուց առաջ զննիչ լյուկերի միջով պատենատուփի բոլոր տաշտակները մաքուր ավոլ լցնել։

18. Աշխատանքի գցելուց հետո նայելով մանոմետրին, անմիջապես համոզվել՝ վոր յուղի պոմպն աշխատում է (քիչ պտույտների ժամանակ մանոմետրը նույնպես պիտի ցույց տա ճնշումը)։

19. Գցելուց հետո շարժիչն աշխատեցնել միջին պտույտներով 8—10 րոպե, ուշադիր լսելով նրա աշխատանքը և հետևելով յուղմանը։

20. Գործարկելուց հետո շարժիչը կանգնեցնել և բացելով լյուկերը, ձեռքով ստուգել շարժանակային առանցքակալների ջերմությունը, նույնպես էլ ստուգել յուղի մատուցումը տաշտակներին։ Յեթե առանցքակալները չեն տաքացել և յուղը լավ է մատուցվում (տաշտակները պիտի լիքը լինեն յուղով, իսկ շարժանակները ծածկված՝ յուղի շերտով), տրակտորը կարելի է ուղարկել աշխատանքի։

21. Հիմնական առանցքակալների զննումը կատարել մինչ շարժանակային առանցքակալների ձգումը։ Դանդաղ պտտելով լիսեռը՝ հարկավոր է ուշադիր զննել գնդիկները — արդյոք նրանց մակերեսի վրա խոռոչներ կամ ճեղքվածքներ չկան։ Ապա արագ պտտել լիսեռը և լսել առանցքակալների ձայնը՝ աղմուկը։ Աղմուկը պիտի լինի հավասարաչափ՝ առանց ճռռոցի և թխկոցների։

Գործիքներ.— Շարժանակի բանալի № 807 . . .	1	հատ
պատենատուփի բանալի	1	»
շպլինտահանիչ	1	»
տափակ բերան	1	»
մուրճ 0,4 կգ	1	»
դդալաձև քերիչ	1	»
պնդողակի բանալի 10×12	1	»
» » 11×14	1	»

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 8

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Մագնետոյի կոնտակտների ընդհատիչների սուգում ու կարգավորում։ Մագնետոյի բաշխիչի յեվ դինամոյի կոլեկտորի մաքրում. մագնետոյի տեղադրման ստուգում (մագնետո Սցինտիլլա տիպի)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Մագնետոն և դինամոն ուշադիր սրբել։

2. Հանել մագնետոյի ընդհատիչի կափարիչը։

3. Գործարկման բռնակով դանդաղ պտտել ծնկաձև լիսեռը՝ միաժամանակ հետևելով ընդհատիչ բռունցքին։

4. Հենց վոր ընդհատիչի բռունցքը կանգ կառնի, դադարեցնել լիսեռի պտույտը։ Այդ նշանակում է, վոր արագացուցչի շնիկը կպել է պահունակի (ոբոյմայի) ցցվածքին։

5. Մետաղալարի (1,5 մմ տրամագծով) ծայրով արագացուցչի պատյանի վերևի մասում գտնվող անցքից սեղմել շնիկը և արագացուցիչն անջատել։

6. Շարունակել ծնկաձև լիսեռը շատ դանդաղ պտտել՝ հետևելով ընդհատիչի կոնտակտներին։ Լիսեռը պտտել մինչև կոնտակտների լրիվ բացվելը։ դրանից հետո կարելի է ստուգել բացակը։

7. Շոշափիչով ստուգել կոնտակտների բացակը։ բացակը պետք և լինի 0,3—0,4 մմ վոչ ավելի։ եթե բացակը սխալ է, ապա բանալիով բաց անել կոնտակտի զնդանի պտուտակի հականդողակը։ Ապա բանալիով վերցնելով պտուտակի գլուխը, պտտելով այս կամ այն կողմ, նայած անհրաժեշտության, բացակը փոքրացնել կամ մեծացնել։ Յերբ բացակը կարգավորված է, հարկավոր է պտուտակն ամրացնել հականդողակով և կրկին ստուգել բացակը։

8. Ընդհատիչի կափարիչը դնել իր տեղը, ստուգել՝ մագնետոն արդյոք լավ և ամրացված իր կամրջակին [պետք է խուսափել հեղուկները չափազանց ձգելուց, վորպեսզի մագնետոյի իրանի (կորպուսի) պարույրները չփչանան] և թույլ չտալ կորցրած հեղուկները փոխարինել յերկարներով։ Նմանապես ստուգել միացնող ֆլանեցի յերկու հեղուկների ձգվածությունը։

9. Պտուտակիչով թուլացնել բաշխիչի այտիկնրեն ամրացնող պտուտակը և հանել յերկու կեսերը։ Մաքուր փափուկ շորով բաշխիչից և նրա կողերից սրբել այնտեղ կուտակված փոշին։ Կողերը տեղը դնել և պտուտակը ձգել։

10. Դինամոյի կոլեկտորը մաքրել բացառապես մաքուր բենզինի մեջ թաթախված մաքուր փափուկ լաթով։

Գործիքներ.— Պտուտակիչ . . . . . 1 հատ
մագնետոյի բանալի . . . . . 1 »
մետաղալարի կտոր 1,5 մմ . . . . 1 »

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ № 9

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Մաքրել յև լվանալ կարբյուրատորի վառելանյութի ֆիլտրը, գլաններին ջուր մատակարարող խողովակները յև յեռախողովակները (տրոյնիկները), սնման սիստեմի խողովակները յև նստվածքակալների ֆիլտրները

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Նստվածքակալի ծորակը փակել։

2. Սնման խողովակը հանել, փչահարել և կերոսինով լվանալ։

3. Կարբյուրատորի ֆիլտրի իրանը հանել։ Ֆիլտրի ցանցը և իրանը լվանալ։

4. Ֆիլտրի իրանն իր տեղը դնելով՝ նրա տակը միջադիր (ողակ) դնել, վերջնականապես չձգելով խուլ պնդողակը։

5. Նստվածքակալի ֆիլտրը լվանալ (տես հրահանգ. ցուցում № 2) և սնման խողովակը տեղը դնել՝ ճիշտ հագցնելով պնդողակը։

6. Կարբյուրատորի ֆիլտրի իրանի պնդողակը ձգել և սնման խողովակն ամրացնել։

7. Ջրի մատակարարման յերկխողովակը և յերկու յեռախողովակները հանել։

8. Յեռախողովակներից խուլ պնդողակները հանել։

9. Ծայրը մի քիչ տափակացրած 2 մմ տրամագծով պողպատի մետաղալարով յեռախողովակների անցքերից պտտվող շարժումներով մաքրել կաթսաքարը։ Բարակ մետաղալարով մաքրել ջրի մատակարարման յերկնակի խողովակը և փչահարել այն։

10. Նույն ձևով մաքրել ջրի կարբյուրատորի ֆիլտրը, սնման խողովակը և նստվածքակալը։

Գործիքներ.— Պնդողակի բանալի 17×19 . . . 1 հատ
մետաղալարի կտոր 2 մմ տրամագծով 1 »

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ № 10

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բլոկի գլխիկի մաքրում ու լվացում. փականների հղկում յև սեղմում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Սեղմման առանձնարանում յերկաթե քերիչներով մաքրել ամբողջ այրուքը և նմանապես հեռացնել փականների այրուքը

գլխիկը և փականները կերոսինի մեջ լվանալ։ Ստուգել փականներ ի վրա դրված նիշերը։

2. Գլխիկը դնել յերկու տակդիրի վրա։

3. Զմռնիտի փոշու № 0 և № 00 յերկու տեսակից ավտոլի հետ խառնած կիսաջրալի քսուկ պատրաստել։

4. Փականի տակ հատուկ զսպանակ դնելով (յեթե այդպիսին չկա, ապա լծակի զսպանակը)՝ հղկումը կատարել դրելի կամ շաղափի ծայրին դրված պտուտակիչի ոգնությամբ։ Սկզբում փականի յեզրերը պիտի ծածկել № 0 փոշով պատրաստած քսուկի հավասարաչափ շերտով։ Թեթև սեղմելով շաղափի (կոլովորոտի) վրա՝ փականի գլխիկը քառորդ պտույտ պտտել, հետադարձ շարժման ժամանակ ճնշումը թուլացնելով։ Փականի տակին գտնվող զսպանակը կբարձրացնի այն և այդպիսով հղկման ժամանակ կլավացնի յեզրերի յուղումը։ Մի վորոշ կարճ ժամանակից հետո փականը հանել և սրբել։ Զննել նրա բնի յեզրերը։ Յեթե յեզրերի վրա աննշան խոռոչներ են մնացել, հղկումը շարունակել № 00 (ավելի մանր) փոշով, մինչև խոռոչների և բծերի լրիվ անհետանալը։ Հղկումը պիտի շարունակել մինչև վոր փականի յեզրերի վրա ամբողջ շրջագծով առաջանա անընդհատ մաքուր հղկված, փայլատ գույնի 2—3 մմ լայնության գոտի։

5. Հղկումը վերջանալուց հետո ամբողջ զմռնիտը հեռացնում են, փականը և նրա բնիկը կերոսինով լվանում և վողորկում են։

Վողորկումը կատարում են փականը բնին ուժեղ սղմելով՝ նախապես բնի յեզրերին կերոսինի և յուղի խառնուրդ քսելով։

6. Հղկված և վողորկված փականը հարկավոր է ստուգել։ դրա համար բնի յեզրերի լայնությամբ մատիտով 8 հատ նշան անել (մինչ այդ, փականը և բունը պիտի չորացնել), փականը դնել բնի մեջ առանց զսպանակի և ուժեղ սղմելով՝ $^1/_8$ պտույտ անել։ Յեթե դրանից հետո բոլոր նշաններն անհետանան, փականը հաշվել հղկած։ Յերբ բոլոր փականներն այս ձևով հղկված և ստուգված են, անհրաժեշտ է հղկման վորակն ստուգել կերոսինով։

7. Բոլոր փականները և բնիկները բոլորովին չորացնել և փականները դնել իրենց բները՝ նրանց ուժեղ խփելով։ Ապա ստուգել փականների հղկումը, վորի համար բլոկի գլխիկը դնել արտածման և ներածման անցքերով դեպի վեր և այնտեղ կերոսին լցնել։ Յեթե սեղմման առանձնարանի հղկման տեղերից 5—10 րոպեյում կերոսին չի ծորում, հղկման վորակը համարել բավարար։ Յեթե վորևե փականի տակից կերոսինի ծոր է նկատվում, այդ փականը պիտի կրկին հղկել և ստուգել՝ մինչև ծորի վերացումը։

Գործիքներ.—Շաղափ կամ դրել՝ պտուտակիչով . . . 1 հատ
փափուկ զսպանակ . . . . . 1 »
այրուք մաքրելու քերիչ . . . . . 1 »

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ № 11

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Մխոցների յեվ նրա անվակների մաքրումն այրուքից. մխոցների մասերի զննումը՝ առանց քանդելու

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Առվակի լայնքով պատրաստված յերկաթե քերիչով ուշադրությամբ մաքրել մխոցների հատակի և առվակների ամբողջ այրուքը։

2. Այրուքը մաքրելուց հետո բոլոր մխոցները կերոսինով լվանալ։

3. Զքանդելով մխոցը՝ ստուգել մխոցային մատի դրությունը շարժանակի վերևի վռանում։ Ստուգելու համար մխոցը դնել դազգյահի վրա և ձախ ձեռքով սեղմել սեղանին, իսկ աջով վերցնելով շարժանակը և բարձրացնելով ու իջեցնելով այն, վռանի մեջ պարզել թուլությունը՝ հետևելով շարժանակի վռանի շարժմանը։ Յեթե նկատվի զգալի լյուֆտ (խաղ), ապա անհրաժեշտ է մխոցը քանդել և մատը փոխել։

4. Յեթե ստուգման ժամանակ մատերի զգալի լյուֆտ նկատվի վերաձուլիկների մեջ, ապա մատը պիտի փոխել։

Գործիքներ.—Ողակների հանիչ . . . . . 1 հատ
քերիչներ՝ այրուքը մաքրելու համար 1 »
ունիվերսալ շոշափիչ . . . . . 1 »
յերեսի տափակ խարտոց . . . . . 1 »
ճակատահատ բանալի . . . . . 1 »

Տրակտորի տեխ. խնամքը — 4

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 12

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Վերեվի կոմպրեսորոն ողերի փոխումը

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Նախքան վերևի նոր ողը դնելը, այն անհրաժեշտ է տեղադրել ըստ գլանի և ըստ մխոցի։

2. Նոր ողը դնել բլոկի գլանի մեջ (հավասարեցնելով մխոցի ոգնությամբ), գլանի վերևի յեղրից, իջեցնելով այն մինչև 170 մմ, վորտեղ ողակը պիտի ունենա 0,1 մմ բացակ. յեթե բացակ բոլորովին չկա, ապա յերեսը տափակ խարտոցով ծայրերը մի քիչ խարտել և գլանում բացակը կրկին ստուգել։

3. Մխոցի անվանակի մեջ թավալելով ստուգել ողը՝ չհպցնելով այն մխոցի վրա։ Յեթե ողի ներսի մակերեսը թեկուզ մի փոքր բարձր լինի մխոցի մակերեսից, այդպիսի ողը համարել անպետք։ Ողի ներսի մակերեսը մխոցի մակերեսից մի քիչ ցածր պիտի լինի։ Նույն ձևով ստուգում են ողն ըստ լայնքի։ Յեթե պարզվի, վոր ողը չափազանց լայն է, ապա հարկավոր է այն հղկել ուղիղ տախտակի վրա ամրացված զմռնիտի քաթանի վրա։ Ողը ձեռքի մատներով սեղմելով քաթանին, շրջանաձև շարժումներով մաշեցնում են նրա կողքի մակերեսը։

4. Ստուգել կոմպրեսորոն և յուղել մնացած ողերի վիճակը։

Դարձիկներ.— Ունիվերսալ շոշափիչ . . . . . 1 հատ
զմռնիտի քաթան . . . № 1 և № 0—2 »

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 13

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Կարբյուրատորի կարգավորումը յեվ լվացումը ջրի, առանձարանի կափարիչի ոնցրի մաքրումը

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Ջրի և վառելանյութի կարբյուրատորները քանդել և նրանց բոլոր մասերը կերոսինի մեջ լվանալ։

2. Ստուգել խցանե լողանը (արդյոք վորոշ տեղերում շերլակը դուրս չի պրծել)։

3. Ստուգել ջրի կարբյուրատորի լողանը (ջուրը ներս չի ծծվել)։

4. Ստուգել ասեղային փականների կոնուսը և մեծ մաշվածության դեպքում փոխել։

5. Մաքրել (0,9 մմ վոչ հաստ մետաղալարով) առանձնարանի վերևի կափարիչի տրամաչափված անցքը։

6. Պղնձե լարով մաքրել ցողիչի վեց անցքը, կերոսինի մեջ այն լվանալ և լավ փչահարել։

7. Խցանե լողանը և ասեղային փականը դնել տեղը և ամրացնել ֆիլտրի իրանը։ Լողային առանձնարանի կափարիչը տեղը դնել՝ առանց կարգավորիչ խողովակի և ամրացնել ցողիչը։

8. Ֆիլտրի իրանին ամրացնել սնման խողովակը և բաց անել կերոսինի բաքի նստվածքակալի ծորակը։

9. Հետևել՝ ինչ բարձրության վրա յե կանգ առնում վառելանյութը։ Լողանի առանձնարանն այդ ժամանակ պիտի պահել հորիզոնական դրության։

10. Վառելանյութի բարձրությունն այդ դեպքում 1,5—2 մմ ցածր պիտի լինի ժիկլյորի վերևի ծայրից։

11. Այն դեպքում, յերբ վառելանյութի բարձրությունն անկանոն լինի, անհրաժեշտ է լողանի լծակը ծռելով հասցնել նշված բարձրության, հետևելով, վոր լողանը չկպչի լողանի առանձնարանի պատերին։

12. Ջրի լողանի առանձնարանում ստուգել ջրի բարձրությունը, վորի համար հավաքված լողանով ջրի սնման խողովակը միացնել լողանի առանձնարանին և մատով ծածկելով ներքևի անցքը, բաց անել ջրի նստվածքակալի ծորակը։ Ջրի բարձրությունը պիտի լինի առանձնարանի պատի կես բարձրության, իսկ լողանը՝ հորիզոնական դրությամբ։

Դարձիկներ.— Պնդողակի բանալի 11×14—1 հատ
» » 17×19—1 »
» » 22×27—1 »
մետաղալարի կտոր 0,99 մմ—1 »
տափակ բերան . . . . . 1 »

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 14

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Փականվի փոխանցման իրանի կափարիչի միջով միացման մուրճի զնելումը յեվ նրա հենման առանցքակալի յուղման սուգումը

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Սրբել և մաքրել փոկանվի փոխանցման կափարիչը։

2. Անցքի միջով դնել միացման մուֆտակը և ստուգել սեղմիչ լծակների և հենման առանցքակալի ողի միջև ընկած բացակը։ Բացակը պիտի միատեսակ լինի բոլոր լծակների մոտ և լինի 5—8 մմ սահմաններում։

3. Եթե ստուգման ժամանակ պարզվի, որ բացակը մեծ է, ապա հարկավոր է հանել պեդալի ձգանը, թուլացնել հակապնդողակը և յերկարությունը կարճացնել, 1—2 պտույտ անելով՝ ձգանը դնել իր տեղը։ Եթե բացակն այդ դեպքում ճիշտ է, ապա ձգել ձգանի հակապնդողակը։

4. Եթե բացակ չկա, կամ չափազանց փոքր է, ապա հարկավոր է նույն ձևով յերկարացնել պեդալի ձգանը։

5. Ստուգել ճկուն թեղանի վիճակը և յուղի մատուցումը հենման առանցքակալին։ Դրա համար առանցքակալը հարկավոր է շպրիցով յուղել։

6. Ճիշտ կարգավորված սիացման մուֆտակի պեդալը պիտի ունենա 30—35 մմ ազատ քայլք։

Դարձիկներ.— Պնդողակի բանալի 11×14 մմ — 1 հատ
— » — 19×22 մմ — 1 »
շպրիցց . . . . . — 1 »
տափակ բերան . . . . . — 1 »

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 15

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Մագնետոյի ընդհատիչի կոնտակտների սուղումը յեվ մաքրումը

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Սրբել մագնետոն։

2. Հանել ընդհատիչի կափարիչը։

3. Փոքրիկ պտուտակիչով հանել ընդհատիչի կողքի կափաքիչի պտուտակը և հանել կափարիչը։

4. Հանել ընդդիմադիր ողակի յերկու պտուտակը և ողակը զգուշությամբ հանել։

5. Հանել ընդհատիչի կոմպլեկտը։

6. Հատուկ թավիշե խարտոցով կոնտակտների մակերեսից հեռացնել սև այրուքը և խոռոչները՝ մետաղն զգուշությամբ և ուղիղ խարտելով։ Հարկավոր է, վորքան հնարավոր է, քիչ խարտել։ Եթե կոնտակտների մակերեսին խոռոչներ չկան, այլ միքիչ փառ է բռնել, ապա կարիք չկա քանդել և խարտել։ Բավական է միայն խարտոցի վրա դնել № 00 զմռնիտի քաթանի մի շերտ և մաքրել կոնտակտները, վորից հետո փոշին մաքրել։

7. Տեղը դնել կոնտակտները և կարգավորել նրանց բացակը (տես հրահանգչ. ցուցում № 8)։

Դարձիկներ.— Պտուտակիչ 5 մմ . . . . . 1 հատ
պտուտակիչ 3 մմ . . . . . 1 »
մագնետոյի բանալի՝ իր շոշափիչով . . 1 »
թավիշե տափակ խարտոց . . . . . 1 »
զմռնիտի քաթան № 00

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 16

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Սառեցման սիստեմից կաթսաքարի հեռացումը

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Ձև № 1

1. Շարժիչի սառեցման սիստեմը լցնել ազաթթվի ջրի լուծույթ։ Թթու վերցնել 5% կոնցենտրատի՝ լուծելով մեկ լիտրը 10 լիտր ջրում։

2. Շարժիչն աշխատեցնել ծածկված ծածկաշորով (շտորայով)։ Յերբ սառեցման սիստեմում լուծույթի ջերմաստիճանը կհասնի 90—95°-ի, ծածկաշորն իջեցնել այնքան, վորպեսզի աշխատող շարժիչում լուծույթի ջերմաստիճանը մնա կայուն և հավասար լինի 8-ի 90—95°-ի։

3. Ռադիատորի վերևի բաքում ընտրվում է նստվածքով ծածկված փորձնական սաս, վորի վրա, շարժիչի աշխատանքի

ընթացքում կատարվում են դիտողություններ։ Հենց վոր նստվածքն այդ մասում կլուծվի, սառեցման սիստեմն ազատում են լուծույթից և մաքուր ջուր են լցնում։

4. Շարժիչի 10—15 րոպե աշխատանքից հետո սառեցման սիստեմից ջուրը թափել և կրկին մաքուր ջուր լցնել։ Շարժիչի 10—15 րոպե աշխատանքից հետո ջուրը կրկին փոխել։

Նյութ — 5%-ային աղաթթու — 5 լիտր։

Զ ե վ Զ-Ր դ

1. Ցեռացրած ջրի մեջ լուծել սովորական լվացքի սոդա, հետևյալ հարաբերությամբ՝ 100—150 գրամ մի լիտր ջրի մեջ։

2. Այդ լուծույթը լցնել սառեցման սիստեմը և տրակտորով մի որ աշխատել։

2. Դրանից հետո լուծույթը թափել և ամբողջ սիստեմը մաքուր ջրով լվանալ։

Նյութ — Սոդա։

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 17

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Փականների բների Ֆրեզելը

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Այրուքը հեռացնելուց ու լվանալուց հետո բնիկները և առանձնարանը սրբել։

2. Պատրաստել 15°, 45° և 75° ֆրեզերների կոմպլեկտ։

3. Ֆրեզերների ուղղապահն ընտրել հնարավորության չափ ճիշտ փականների ուղղապահ վառանների անցքերի տրամագծով։

4. Փականի բնի հենվելու գոտու լայնությունը 3 մմ ավելի չպիտի լինի։ Յեթե գոտին լայն է և ունի կիսակլոր պրոֆիլ, անհրաժեշտ է 75° ֆրեզերով բնի ներքևի մասը մաքրել այրուքից և կաթսաքարից՝ մետաղից մի քիչ վերցնելով։

5. 15° ֆրեզերով պահանջվող լայնությամբ բունը վերևից նստեցնել։

6. 45° ֆրեզերով զգույշ ուղղել գոտու մակերեսը։ Հենց վոր

ֆրեզերը վերցնի մետաղն ամբողջ շրջագծով և գոտին ամեն տեղ լինի 3 մմ լայնությամբ, գործողությունը հաշվել վերջացած։

Գործիքներ 15°, 45° և 75° ֆրեզերների կոմպլեկտ։

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 18

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ծնկաձև լիսեռի շարժանակային վզիկների սեղմում

Հիմնական առանցքակալների վիճակի սեղմում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Լիսեռի բոլոր վզիկները մանրաղնին և մաքուր լաթով բոլորովին ցամաքեցնել։

2. Յերբ վզիկը գտնվում է ներքևի դրության մեջ, յուրաքանչյուր վզիկը յերեք կետում միկրոմետրով չափել (50—75 մմ)։

3. Յերբ լիսեռը 1/4 պտույտ պտտված է և բոլոր վզիկները գտնվում են հորիզոնական դրության մեջ, յուրաքանչյուր վզիկ չափել ևս յերեք կետում։

4. Չափելու կետերը հետևյալն են. առաջին կետը չափում են ռադիատորի կողմից գալտելից 5 մմ հեռավորության վրա։ Յերրորդ կետը չափում են հանդիպակաց գալտելից, նմանապես 5 մմ հեռավորության վրա։ Յերկրորդ կետը չափում են վզիկի մեջտեղից։ Յերեք չափումներն էլ կատարում են մի մակերեսում, յերբ լիսեռի վզիկները գտնվում են ամենացածր դրության մեջ։ Մյուս յերեք չափումները կատարում են նույն ձևով՝ լիսեռը 1/4 պտույտ շրջելով, յերբ լիսեռի ծունկը գտնվում է հորիզոնական դրության մեջ։

5. Հանելով մի մակերեսի № 1 փոքր չափումը մյուս մակերեսի № 1 մեծ չափումից՝ կստանանք ելիպսի մեծությունը, նույն ձևով ելիպսն ստուգվում է մյուս չափվող կետերում։

6. Ելիպսը թույլատրվում է մինչև 0,2 մմ մեծության, դրանից մեծ ելիպսի դեպքում լիսեռի վզիկները պետք է հղկել։

7. Առջևի հիմնական առանցքակալն ստուգել գործարկման բռնակի հանած առանցքակալի անցքի միջով։

8. Թուլացնել հովհարի փոկը։

9. Վերցնել լինդը և գործարկման բռնակի առանցքակալի անցքի միջով դնել ծնկաձև լիսեռի տակ և լինդի կտրուկ շար-

ժումներով, նրանով սեղմելով շրջանակը, ստուգել հինական առանցքակալի մաշվածությունը։

10. Հետևի (հինական) առանցքակալն ստուգվում է հետևի լյուկի միջով, նույնպես լինգի սեղմումով։ Լինգի տակը, շրջանակի վրա, դնում են փայտի կտոր և լինգը հենելով շրջանակին՝ ստուգում են։

Գործիքներ.— Միկրոմետր 50—75 մմ — 1 հատ
լինգ . . . . . 1 »

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 19

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Կարգավորիչի բանդում, մաքրում յեվ լվացում, զսպանակների յեվ կարգավորիչ բեռիկների դրության ստուգում, սարքահավաք յեվ տեղադրում (կատարվում է մեխանիկի անմիջական մասնակցությամբ)։

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Հանել ռադիատորը։
2. Մաքրել կարգավորիչի կափարիչը։
3. Հանել կարգավորիչի վերևի կափարիչը։
4. Հանել ձգանի և հակազդիչի յերկու ծայրի պնդողակները (վոչ մի դեպքում չշարժելով հետևի յերկու պնդողակները)։
5. Բացել ձգիչի (խողովակի) բռնակը, ճիշտ հաշվելով՝ քանի՞ պտույտ է արված դրա համար, և հանել ձգիչի զսպանակը։
6. Հանել հակազդիչի ձգանը։
7. Հանել յուղի խողովակը։
8. Հանել կարգավորիչի առջևի կափարիչի հեղույսները և կափարիչը հանել։
9. Հանել բեռիկների յերկու զսպանակները և կարգավորիչի բոլոր մասերը դնել։
10. Բեռիկների զսպանակների պարույրաձև թելերն ազատ դրությամբ պետք է կիպ կպչեն իրար։
11. Այն դեպքում, յեթե զսպանակների ողերը մաշված են իրենց հաստության կեսից ավելի, զսպանակներն հաշվել անպետք։
12. Կարգավորիչը հավաքելիս ձգող զսպանակը տեղադրել նախկին ձգվածությամբ։

13. Հակազդիչի ձգանի պնդողակը կիպ ամրացնել։
14. Համոզվել կարգավորիչի կափարիչի թղթե միջադիրների լավ դրությանը և անհրաժեշտության դեպքում փոխել։

Շարժիչն աշխատեցնելուց հետո ստուգել կարգավորիչը (տես հրահանգչ. ցուցում № 22)։

Գործիքներ.— Պնդողակի բանալի 10×12 — 1 հատ
» » 11×14 — 1 »
» » 14×17 — 1 »
տափակ բերան . . . . . 1 »

ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 20

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ղեկի սիստեմի վորդնաձև փոխանցման յեվ ձգանի ստուգումն ու կարգավորումը

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Վորդնաձև ատամնանվի լիսեռի լծակից հանել ղեկի ձգանը։
2. Հանել վորդնաձև ատամնանվի լիսեռի առանցքակալը (ֆլանեց) իր ատամնանվով։
3. Հանել ղեկի սյունը։
4. Ատամնանվից, պատյանից, վորդնակից հեռացնել հին սոլիդոլը և մասերը կերոսինի մեջ լվանալ (տավոտը)։
5. Ղեկի սյունի ֆլանեցի տակ գտնվող տարբեր հաստության միջադիրներով կարգավորել ղեկի լիսեռի տարուբերը։ Փոխելով և ավելացնելով միջադիրները, անհրաժեշտ է ձգտել, վոր ղեկի լիսեռը վոչ մի տարուբեր չունենա դեպի վերև և նիստքև և միաժամանակ բոլորովին ազատ պտտվի ղեկի անվի հետ։
6. Յերբ ղեկի լիսեռը կկարգավորվի, անցնել վորդնաձև ատամնանվի կարգավորման։ Նույն ձևով, ավելացնելով կամ պակսեցնելով միջադիրները, վերացնել լիսեռի ատամնանվի յերկայնակի տարուբերը։ Ատամնանիվն իր բնում պիտի ազատ պտտվի։
7. Յերբ կարգավորումը վերջացած է, ատամնանվից կողքի ֆլանեցը հանել և պատյանը թարմ սոլիդոլ լցնել (տավոտ)։
8. Վերջնական հավաքման ժամանակ ֆլանեցի հեղույսները

խաչաձև ձգել (աստիճանաբար)։ Ղեկի անիվը պիտի ունենա մեռյալ ընթացք (լյուֆտ)՝ անվի լրիվ պտույտի $^1/_{16}$-ի չափով (22^0)։

9. Միացնել ղեկի ձգանը և կարգավորել ամորտիզատորների լյուֆտը, վորի համար մի քիչ սեղմել ձգանի ծայրերի խցանները՝ մինչև մեռյալ ընթացքի անհետանալը։

10. Ձգանի կարգավորումից հետո ծայրերի խցանները շպլինտել։

Գործիքներ.—Պնդողակի բանալի 11×14 — 1 հատ
» » 19×22 — 1 »
» » 22×27 — 1 »
տափակ բերան . . . . . 1 »
մուրճ . . . . . 1 »
պտուտակիչ . . . . . 1 »

ՀՐԱՀԱՆԳՁԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 21

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Առջևի անիվների գլանիկային առանցքակալների զննումը, լվանալը, նրանց կարգավորումն ու յուղումը

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Ամբարձիկով բարձրացնել առջևի անիվը։
2. Անիվը հողից մաքրել և սանդիկը սրբել։
3. Թասակի յերեք հեղույսները և թասակը հանել։
4. Բացել անվի վեցկողանի պնդողակի կառանային տափողակի (շայբայի) ծռված ծայրը։
5. Հանել վեցկողանի պնդողակը։
6. Հանել կառանային տափողակը և կողպեքը կարգավորել։
7. Փակող կլոր պնդողակը հատուկ բանալիով հանել։
8. Հանել առջևի անիվը՝ արտաքին գլանիկային առանցքակալի հետ։ Առանցքակալներից և սանդիկից հին տավոտը հեռացնել։ Բոլոր մասերը կերոսինի մեջ լվանալ։
9. Ուշադիր զննել գլանիկային առանցքակալի և թաղիքե յուղարգելի (ընդերացանցի) վիճակը։
10. Գլանիկային առանցքակալները մաքուր յուղել, նմանապես սանդիկը նրանով լցնել։ Անիվն արտաքին գլանիկային առանցքակալի հետ տեղը դնել։

11. Ձգել փակող պնդողակը՝ միաժամանակ պտտելով անիվը։ Ձգումը շարունակել այնքան, մինչև վոր անիվը կսկսի դժվար պտտվել։

12. Պնդողակը $^1/_{16}$ պտտույտ հետ պտտել և նորից փորձել պտտել անիվը։ Նա պիտի ազատ պտտվի, բայց կողքի խաղ չունենա։

13. Տեղը դնել կողպեքը և կառանային տափողակը։

14. Վեցկողանի պնդողակը ձգել մինչև վերջը։

15. Կառանային տափողակի ծայրը ծռել պնդողակի յեզրի վրա։

16. Հին տավոտը թասակից հեռացնել, լվանալ այն և թարմ տավոտ լցնել. ստուգել թասակի թղթե միջադիրը և տեղը դնել։ Ստուգել ռեբորդի ամրվածքը։ Նույն ձևով կարգավորել առջևի մյուս անիվը։

Գործիքներ.—Պնդողակի բանալի 19×17 — 1 հատ
» » 22×27 — 1 »
անվի պնդողակի հատուկ
կամ բացվող բանալի — 1 »
փակող պնդողակի հատուկ
բանալի — 1 »
պտտուտակիչ — 1 »

ՀՐԱՀԱՆԳՁԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ № 22

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Շարժիչի պտույտների ստուգում յեվ կարգավորում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Շարժիչի պտույտներն ստուգվում են պտուտաչափով, վորի ծայրը դնում են փոկանվի լիսեռի կենտրոնում։ Բանարկու փոկանվի լիսեռը բեռնավորված շարժիչում պիտի տա 625 պտույտ։ Անաշխատ ընթացքի ժամանակ, հակազդիչ կափարիչի լրիվ բացված դրությամբ (դնելով հակազդիչի լծակն ամենաբարձր դրությամբ) բանարկու փոկանվի պտույտների թիվն անհրաժեշտ է հասցնել

680—700-ի՝ ձգելով կամ բաց թողնելով կարգավորիչի ձգիչի զսպանակը։

Յերբ պտույտներն արդեն կայուն են, հարկավոր է մեծաղալարով կնքել ձգիչի բռնակը։ Դրանից հետո լրիվ փակել գազի կափարիչը, շարժիչին տալ նվազ պտույտներ և կափարիչը սահուն բաց անել։ Յեթե բանարկու փականվի պտույտների թիվը չի փոխվում, ապա այդ նշանակում է, վոր կարգավորիչը լավ է աշխատում, հակառակ դեպքում՝ պետք է ստուգել՝ կարգավորիչի ձգանը չի՞ կպչում արդյոք վորևե տեղի։

Դործիքներ.— Պտուտաչափ և ժամացույց — 1 հատ

ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՅԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ, ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

1. Յուրաքանչյուր ՄՏԿայան և խորհտնտեսություն կազմում է տրակտորների տեխնիկական խնամքի և նորոգման տարեկան պլան։ Տարեկան պլանի նպատակն է՝ պարզել տեխնիկական խնամքի ու նորոգման աշխատանքի ծավալը տարվա ընթացքում, և պիտի արտացոլի.

ա) պարբերական տեխնիկական խնամքի ու նորոգման յուրաքանչյուր տեսակի (սկսած № 4 տեխ. խնամքից) ընդհանուր քանակն ըստ տրակտորների առանձին մարկաների, ամբողջ տարվա ընթացքում.

բ) տեխ. խնամքի ու նորոգման բաշխումն ըստ գյուղատնտեսական առանձին ժամանակաշրջանների.

գ) տեխ. խնամքն ու նորոգումն անցկացնելու կապակցությամբ արհեստանոցների բեռնավորումը.

դ) տեխնիկական խնամքն ու նորոգումն անցկացնելու համար պահանջվող պահեստի մասերի (քանակը և ժամկետը) և նորոգման նյութերի քանակը։

2. Տեխնիկական խնամքն ու նորոգումը պլանավորվում են, յելնելով տրակտորների բեռնվածությունից՝ առանձին սեզոններին և ամբողջ շահագործման ժամանակաշրջանում։ Տրակտորների բեռնվածությունն առանձին սեզոններին և ամբողջ աշխատանքային ժամանակաշրջանում վորոշվում է ՄՏԿայանի կամ խորհտնտեսության յուրաքանչյուր տրակտորային բրիգադին

տրված արտադրական առաջադրանքի հիման վրա։ ՄՏԿայանի կամ խորհտնտեսության տեխնիկական խնամքի տարեկան պլանը կազմվում է վորպես բոլոր տրակտորային բրիգադների ամփոփում։

3. Տարեկան պլան կազմելու ժամանակ ամբողջ շահագործման շրջանը բաժանվում է չորս գյուղատնտեսական սեզոնի՝ գարնանացանի և ամռան ցելի սեզոն (մարտ—մայիս), ցելերի մշակման և բերքահավաքի նախապատրաստման սեզոն (հունիս), բերքահավաքի և աշնանացանքի սեզոն (հուլիս—ոգոստոս), ձմռան ցելի սեզոն (սեպտեմբեր—հոկտեմբեր)։

4. Արտադրական առաջադրանքի հիման վրա վորոշվում է տրակտորների պլանային բեռնվածությունը (առանձին՝ անվավոր և առանձին՝ թրթուրավոր տրակտորների համար) ըստ յուրաքանչյուր տրակտորային բրիգադի՝ փափուկ վարի հեկտարներով յուրաքանչյուր սեզոնի և ամբողջ դաշտային ժամանակաշրջանի համար։ Փափուկ վարի հեկտարներով բեռնվածությունը վորոշվում է՝ կատարելիք բոլոր գյուղատնտեսական աշխատանքները վերածելով փափուկ վարի՝ Հողժողկոմատի հաստատած կոեֆիցիենտներով։ Մասնակցող յուրաքանչյուր տրակտորի բեռնվածությունն ընդունվում է միջինը, յելնելով բոլոր մասնակցող միևնույն մարկայի տրակտորների ընդհանուր բեռնվածությունից։

Յուրաքանչյուր գյուղատնտեսական սեզոնում մասնակցող տրակտորների քանակը վորոշվում է յելնելով աշխատանքի ծավալից։ Առանձին սեզոններում արտադրական առաջադրանքի կատարման համար ծրագրվող տրակտորների քանակը պիտի ապահովի մի տրակտորի նորմալ բեռնվածությունը։

5. Տեխնիկական խնամքի և նորոգման համարները պլանավորվում են սկսած գարնանային աշխատանքի առաջին որվանից, հաշվի առնելով նորոգման տեսակը, վոր տրակտորն անցել է աշնան-ձմռան ժամանակաշրջանում, և հեկտարների քանակը (վերածած փափուկ վարի), վոր տրակտորը վարել է վերջին հիմնական նորոգումից հետո (նոր տրակտորի դեպքում շահագործման սկզբից)։

6. ՄՏ կայանի կամ խորհտնտեսության մեկ տրակտորային բրիգադի տրակտորների նորոգման և տեխնիկական խնամքի որինակելի պլանը բերված է № 1 հավելվածում։

7. Տրակտորների նորոգման և տեխնիկական խնամքի տարեկան պլանը կազմում է տրակտորային պարկի վարիչը և հաստատում է ՄՏԿայանի կամ խորհտնտեսության դիրեկտորը։

ԱՄԵՆ ԱՄՍՎԱ ՈՊԵՐԱՏԻՎ ՊԼԱՆԸ

Տրակտորային պարկի վարիչը նորոգման և տեխ. խնամքի անցկացման հաստատված տարեկան պլանի համաձայն տանում է գյուղատնտեսական աշխատանքների ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում ամսական ոպերատիվ պլանավորում, վորն արտացոլում է տեխ. խնամքի որացուցային դասավորումը և նորոգող բանվորների բեռնվածությունը յուրաքանչյուր ամսվա ընթացքում։

Դրա համար մի թերթ թղթի վրա (մասշտաբով 1 սմ համապատասխանում է 5 որվա) գրվում է ամսական ոպերատիվ պլանի որացուցային ցանցը, ըստ վորում յուրաքանչյուր տրակտորի համար առանձնացվում է յերկու տող՝ վերևինը՝ ամսական պլանի համար և ներքևինը՝ նորոգման և տեխ. խնամքի փաստացի կատարման համար (տես № 2 հավելվածը)։

Գարնան աշխատանքների սկզբին տրակտորային պարկի վարիչն ամսական պլանի տողում գրում է տեխ. խնամքի առաջադրանքն առաջին ամսվա աշխատանքի համար և միաժամանակ նույն առաջադրանքը գրում է ամսական որացուցային պլանի ստուգիչ թերթի համապատասխան տողում։

Ստուգիչ թերթերի բլանկները պատրաստվում են կցված ձևով (տես հավելված № 3) և բրիգադի բոլոր տրակտորների պլանային առաջադրանքները գրանցելուց հանձնվում է ՄՏԿայանի նորոգման բրիգադիրին կամ խորհտնտեսության բաժանմունքի մեխանիկին։

Նորոգման բրիգադիրը կամ բաժանմունքի մեխանիկը «Տրակտորի աշխատանքի որագրի» (տես հավելված № 4) գրանցումների հիման վրա ստուգիչ թերթում նշում է յուրաքանչյուր տրակտորի կատարած աշխատանքի քանակը, անցկացրած տեխ. խնամքի համարները, թվականները և ծախսված պահեստի մասերի ու նյութերի քանակը։

Մի ամսից հետո, ստուգիչ թերթում նշանակված ժամկետին լրացված և ստորագրված թերթերը հանձնվում են տրակտորային պարկի վարիչին, վորը տեխ. խնամքի փաստորեն կատարված

տվյալները փոխադրում է ամսական ոպերատիվ պլանի որացուցային ցանցի համապատասխան տողը։

Նորոգման և տեխ. խնամքի նախորդ ամսվա փաստացի կատարման համապատասխան տրակտորային պարկի վարիչը նույն կարգով կազմում է հաջորդ ամսվա պլանը և միաժամանակ լրացնում է նոր ստուգիչ թերթ, վորը կատարման համար հանձնում է բաժանմունքի մեխանիկին կամ նորոգող բրիգադիրին։

ՏՐԱԿՏՈՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԱԳԻՐ

Տրակտորային բրիգադիրը կցված ձևով (տես հավելված 4) տանում է որագիր (տետրակի ձևով)։ Որագրի յերեսին գրվում է տնտեսության անունը, բրիգադի համարը կամ անունը, բրիգադիրի և նրա ոգնականի անունը։ Որագրի մեջ յուրաքանչյուր տրակտորի համար հատկացվում է մի քանի յերես։ Որագրում գրանցումները կատարվում են յուրաքանչյուր հերթափոխը վերջանալուց հետո։

Հերթափոխում կատարված աշխատանքի քանակը (վար, փոցխ, ցանք, բերքահավաք և այլն) վերածվում են փափուկ վարի հեկտարների։ Լրացված որագրերը հանձնվում են տրակտորային պարկի վարիչին։

ՏԵԽ. ԽՆԱՄՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Նորոգման և տեխնամքի կանոնների կատարումն ստուգում են տնտեսության դիրեկտորը և տրակտորային պարկի վարիչը՝

ա) պարբերաբար շրջելով բրիգադները.

բ) «Տրակտորի աշխատանքի որագիր»-ը զննելով և գրանցումների ճշտությունն ստուգելով և

գ) ստուգիչ թերթերի լրացման ճշտությունն ստուգելով «Տրակտորի աշխատանքի որագրի» գրանցման հետ։

2. Բացի դրանից, ՄՏԿայանի և խորհտնտեսության տեխնիկական ղեկավարությունն ստուգում է.

ա) բրիգադի տրակտորների ընդհանուր դրությունը.

բ) տեխ. խնամքի կատարման պարբերականությունը.

գ) գործողությունների կատարման լրիվությունը.

դ) բրիգադների կոմպլեկտավորումը կահավորումով, պահեստի մասերով, նյութերով, սարքավորման ինվենտարով, վառելանյութի և յուղի պաշարվով, նմանապես և կցվող ինվենտարի դրությունը։

Հավելված №1

ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽԱՆԱՄՔՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

_____ 193____ թ. համար

_____ ՄՏԿ-ի _____ բրիգադի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ / ՏՐԱԿՏՈՐՆԵՐ	ՄԱՐՏ—ՄԱՅԻՍ
	Վար _____ հա = _____ հա փափուկ վարի Փոցխել, տափանել _____ հա = _____ » » » Կուլտիվացիա _____ հա = _____ » » » Ցանք _____ հա = _____ » » » Հարոսի վար _____ հա = _____ » » » Ընդամենը _____ հա փափուկ վար Մասնակցել է _____ տրակտոր Միջին հաշվով 1 տրակտորին _____ հա Փափուկ վար

Տրակտորի № -ը	Աշխատանքային կազմակերպումը	Վերջին հիմնական նորոգումից հետո կատարված աշխատանքների ամսական (փափուկ վարի հեկտարներով)	Տրակտորի պլանային բեռնվածությունը՝ փափուկ վարի հեկտարներով		Ամբողջ սեզոնի ընթացքում կատարվելիք տեխնիկական սպասարկումները և նախապատրաստումները
			Սեզոնում	Վերջին հիմնական նորոգումից հետո	

ՀՈՒՆԻՍ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ

Հարոսների մշակում (կուլտիվացիա)

_____ հա = _____ հա փափուկ վարի

_____

_____

_____

_____

_____

Ընդամենը _____ հա փափուկ վար

Մասնակցել է _____ տրակտոր

Միջին հաշվով 1 տրակտորին _____ հա

Փափուկ վար

ՏՐԱԿՏՈՐՆԵՐ

Տրակտորի № -ը	Աշխատանքային նորմայի կատարման տոկոսը	Վերջին հիշողության տոմարի հետ	Տրակտորի պլանային բեռնվածությունը փափուկ վարի հեկտարներով (խմբագրվածներ վարի դեպքում՝ ամբողջությամբ)		Ամբողջ տարի ընթացքում կատարված աշխատանքի ամփոփում՝ ներառյալ ստանդարտներին համապատասխանությունը
			Սեպտեմբեր		

ՀՈՒԼԻՍ—ՕԳՈՍՏՈՍ

ԱՇԽԱՏԱՆՔԻՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

Բերքահավաք՝ կոմբայններով

_____ հա = _____ հա փափուկ վարի

Հարոսների մշակում

_____ հա = _____ » » »

Աշնանացանք

_____ հա = _____ » » »

_____

_____

_____

_____

Ընդամենը _____ հա փափուկ վար

Մասնակցել է _____ տրակտոր

Միջին հաշվով 1 տրակտորին _____ հա

Փափուկ վար

ՏՐԱԿՏՈՐՆԵՐ

Տրակտորի № -ը	Աշխատանքային նորմայի կատարման տոկոսը	Վերջին հիշողության տոմարի հետ	Տրակտորի պլանային բեռնվածությունը՝ փափուկ վարի հեկտարներով (խմբագրվածներ վարի դեպքում՝ ամբողջությամբ)		Ամբողջ տարի ընթացքում կատարված աշխատանքի ամփոփում՝ ներառյալ ստանդարտներին համապատասխանությունը
			Սեպտեմբեր		

ՍԵՊՏԵՄԲԵՐ—ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼ

ՏՐԱԿՏՈՐՆԵՐ

Ցրտահեղեկ

_____ հա = _____ հա փափուկ վարի

Ընդամենը _____ հա փափուկ վար

Մասնակցել և _____ տրակտոր

Միջին հաշվով 1 տրակտորին _____ հա

Փափուկ վար

Տրակտորի № ը	Անունն և ձմեռային նստատեղը	Ամենամեծ հեռավորությունը վարելահողերի մասնակցությամբ	Տրակտորի պլանային բեռնվածությունը փափուկ վարի հեկտարներով			Ընդամենը գործադրված ջանքերի մասին
			Սերմնուռ	Վերջին հիմնական մանրացման տակ	Ցրտացման տակ	

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՄԲՈՂՋ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

ՏՐԱԿՏՈՐՆԵՐ

_____ հա վերածած փափուկ վարի

Ընդամենը _____ հա փափուկ վար

Մասնակցել և _____ տրակտոր

Միջին հաշվով 1 տրակտորին _____ հա

Տրակտորի № ը	Անունն և ձմեռային նստատեղը	Ամենամեծ հեռավորությունը վարելահողերի մասնակցությամբ (խամաքարերի դուրսբերման դեպքում)	Տրակտորի պլանային բեռնվածությունը փափուկ վարի հեկտարներով		Ընդամենը գործադրված ջանքերի մասին
			Ընդամենը տարեսկզբի	Ընդամենը գարնանային	

ոպերատիվ պլանավորման
ցանց

ՄՏԿ-ի անուն

Հուլիս							Հունիս							Մայիս						
Դաշտերի վերամշակման իրականացման ամսաթիվ	5	10	15	20	25	30	Դաշտերի վերամշակման իրականացման ամսաթիվ	5	10	15	20	25	30	Դաշտերի վերամշակման իրականացման ամսաթիվ	5	10	15	20	25	30

Հոկտեմբեր							Սեպտեմբեր						
Դեղ վնասակար ճամբարակերը ցանքատարածությունում	5	10	15	20	25	30	Դաշտերի վերամշակման իրականացման ամսաթիվ	5	10	15	20	25	30

Տրակտորի տեխ. խնամքի յուղ ճոռոզման
յուրաքանչյուր ամսի ռացիոնալային

(խարհանաեռաբյան կամ

| Ապրիլ | | | | | | | | | | | | | | | | | | |

Ամսական օրացուցային յեվ փաստացի

ՄՏԿ .....

193 թ. ..... **ամսի համար հանձնել**

№ հատվածի	Տրակտորի գործարկման ու դադարման ժամերը, ինչպես նաև գործարկման ու դադարման տեղերը	Ամիսը և թիվը	Տրակտորի առաջին դադարը			Տրակտորի 2 դադարը			Տրակտորի 3 դադարը			Տրակտորի 4 դադարը			Ընդամենն արտադր.փափուկ վարի հեկտարներով		Վարված փոստային կամ ցերեկային	Ստացված գյուղատնտեսական մթերքներ
			Ամիսը, թիվը	Ընդմիջման տևողությունը	Ընդմիջման պատճառները (դադարեցման նշան, անիվի դադարեցում, գործարանի դադարեցում, գործարանի դադարեցում տեղի ունեցող դադարներ)	Ամիսը, թիվը	Ընդմիջման տևողությունը	Ընդմիջման պատճառները (դադարեցման նշան, անիվի դադարեցում, գործարանի դադարեցում, գործարանի դադարեցում տեղի ունեցող դադարներ)	Ամիսը, թիվը	Ընդմիջման տևողությունը	Ընդմիջման պատճառները (դադարեցման նշան, անիվի դադարեցում, գործարանի դադարեցում, գործարանի դադարեցում տեղի ունեցող դադարներ)	Ամիսը, թիվը	Ընդմիջման տևողությունը	Ընդմիջման պատճառները (դադարեցման նշան, անիվի դադարեցում, գործարանի դադարեցում, գործարանի դադարեցում տեղի ունեցող դադարներ)	Մի տարում	Ամբողջ գործունեության ընթացքում		
1		Գլանը																
		Կատար.																
2		Գլանը																
		Կատար.																
3		Գլանը																
		Կատար.																
4		Գլանը																
		Կատար.																

Գլանային առաջադրանք տրված է—

193 թ. ..... *տրակտորային պարկի վարիչ՝*

տեխ. խնամքի ու նորոգման

կատարումը

բրիգադի

տրակտորային պարկի վարիչին 193 թ. .....

Առաջադրանքը կատարված է—Նորոգման բրիգադիր՝ .....

193 թ. ..... *տրակ. բրիգադիր՝* .....

Հավելված № 4

Տրակտորների աշխատանքի որագիր

Տրակտոր № _____ _____

(մարկա) (տնտեսության և գործարանային)

Վերջին հիմնական նորոգումից հետո կատարված աշխատանքի ծավալը _____ հա (վերածած փափուկ վարի)

Ամիս և ամսաթիվ	Հերթ	Աշխատանքների տեսակը	Կատարված և հերթում ընթացող	Վնասված փոխադրում (հեղ.) վարի վարի (մետր.)	Անհրաժեշտ մարդ՝ փոխադրման հեղ. վարի համար	Տեխ. խնամքի № -ը կատարված	Տեխ. խնամքի վրա գործադրված ժամանակը	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7	8	9

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՍՏԶ-ԽՏԶ տրակտորների տեխնիկական խնամքի կանոնները 3

Տեխնիկական խնամքներ № 1—6 7

ՍՏԶ-ԽՏԶ տրակտորների տեխնիկական խնամքի անցկացման պարբերականությունը 25

ՍՏԶ-ԽՏԶ տրակտորի գործիքների ցուցակը 26

ՍՏԶ-ԽՏԶ տրակտորների յուղման հրահանգը 27

ՍՏԶ-ԽՏԶ նոր տրակտորների ընդունման և գործարկման կանոնները 30

ՍՏԶ-ԽՏԶ տրակտորների տեխ.խնամքի հիմնական գործողություններն անցկացնելու հրահանգչական ցուցումներ № 1—22 35

Տրակտորների տեխնիկական խնամքի և նորոգման պլանավորումը, հաշվառումն ու հսկողությունը 60

Հավելվածներ

1. Տրակտորների տեխնիկական խնամքի անցկացման տարեկան պլանը 65

2. Տրակտորների տեխնիկական և նորոգման ոպերատիվ պլանավորման յուրաքանչյուր ամսի որացուցային ցանց 72

3. Ամսական որացուցային ծրագիրը և տեխխնամքի ու նորոգման փաստացի կատարումը 74

4. Տրակտորների աշխատանքի որագիր 76

ՀՍՍՀ-ՍՍՀ

Թարգման Թ. Գեորոսյան
Խմբագրեց Ա. Մարչանյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան
Գլավլիտի լիազոր № 1152, հրատ 405, պատ. № 210, տիրաժ 1500
Հանձնված է արտադրության 1937 թ. փետրվարի 20-ին
Ստորագրված է տպելու 1937 թ. մարտի 16-ին

Գյուղհրատի տպարան, Երևան, Նալբանդյան 11.

«Ազգային գրադարան»
NL0288072

183

14.480

Գ ի ն ը 30 կ.

Наркомзем Арм. ССР.

ПРАВИЛА

Технического ухода за трактором

СТЗ-ХТЗ

Арменсельхозгиз, Ереван, Налбандян 11